

14.8.89

Վ. ՍՊԻՐՈՒ

ՅԱՊՈՆԿԱՆ ՆԵՐԻՄՈՒԺՈՒՄԸ ՅՉՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԶԻՆԱՍԱՆԵՐԻՄ

打倒日本國主義者！

32
0-82

文

26 SEP 2006

1 DEC 2009

32
U-87

Գ. ՍՊԻՐՈՒ

ԱՅ

ՅԱՊՈՆԱԿԱՆ
ՆԵՐԻՈՒԺՈՒՄԸ
ՅԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1938


14889

02 AUG 2013




2966

38



Հնթերցողին առաջարկվող ներկա
 բրոշյուրը պատմում է յաղոնական
 ուղմական Փաշխմի տեսորի և բռո-
 նությունների մասին, վոր տեղի յեն
 ունենում թե՛ նրա գրաված չինական
 մարզերում և թե՛ չինական ամրող
 ժողովրդի դեմ: Բրոշյուրը ծանոթաց-
 նում է կաշառման, լրտեսության ու
 վմասարարության այն գաղրելի մե-
 թողների մասին, վոր Յաղոնիայի
 բացահայտ և գաղտնի գործակալնե-
 րը կիրառում են Չինաստանում,
 ցույց ե տալիս չին ժողովրդի տրոց-
 կիստական և այլ գավաճանների
 դեմքը: Բացի դրանից, բրոշյուրում
 բերված են չինական ժողովրդի ինք-
 նակոնության ու հերոսության բար-
 ձաթիվ որինակներ այն պայքարից,
 վոր նա մղում է յաղոնական բռնա-
 կալների դեմ, նկարագրվում է Չի-
 նաստանի համառ պայքարը միասնա-
 կան հակայապոնական աղքային ճա-
 կատ ստեղծելու համար և պատ-
 կերվում է հակայապոնական մար-
 տիկների հետ, յաղոնական ուղմա-
 կան Փաշխմի և յաղոնական վարձ-
 կանների —չին ժողովրդի դավա-
 ճանների բոլոր դոհերի հետ յեղած
 աղքային համերաշխության հզոր
 վերելքը:



ՉԻՆԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՑՄԱՆ ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

ՊԱՐՈՒ ՏԱՆԱԿԱՅԻ ԳԱՂՏՆԻ ՀԱԽԵՍԴԻՐԸ

Չինաստանի հսկայական պետությունը, 450 միլիոնանոց ժո-
 ղովուրդը, վորին մաս-մաս են արել միլիստարիատները, վորին
 կողոպտել են վարձկան գեներալների ու ֆեոդալների զինված
 բանդաները և յերկար ժամանակ ուժասպառ են արել ամբողջ
 աշխարհի խմբերիալիստ գիշատիչները, —այժմ կանգնած ե պատ-
 մական մեծ վետքերի շեմքին: Այն, ինչ վոր մինչեւ հիմա թալան-
 չիական կապիտալի ապետներին, —Ասխայի, Ամերիկայի ու Յեփ-
 րոպայի խմբերիալիստներին թվում եր հեռավոր մի ուրվական,
 գառնում և ունալ իրականություն. —չինական ժողովուրդն արք-
 նանում է, Չինաստանը միավորվում է իրեւ միասնական մի ազ-
 գային որգանիզմ և փորձում է թոթափիլ խմբերիալիզմի, — ա-
 ռաջին հերթին յաղոնական խմբերիալիզմի լուծը:

Յապոնական մինիստր-նախագահ Տանական իր տիրահըռ-
 չակ հուշադրում¹⁾, վոր 1927 թվի հուլիս ամսում տրվել եր կայս-

1) «Հուշադրիր Մանջուրիայում դրական քաղաքականության
 մասին»: Հրապարակված և «Կոմունիստիչների ինտերնացիոնալ»
 ժուռնալի 1931 թվի № 34—35-ում:

բին, ցինիկ բացահայտությամբ շարադրելով Յապոնիայի իմպերիալիստական, թալանչիական պլաններն ու նախատակները Զինաստանում, չինական ժողովրդի հարավոր արթնացումը բնորոշում ե վորպես «ավելի վտանգավոր փառու, քան անդիմական ու ամերիկական մրցակցությունը Չինաստանում»... «Մենք պետք ե վախճանանք այն որից, յերբ Չինաստանը կմիավորվի և նրա արդյունաբերությունը կսկսի բարդավաճել», —ավելացնում ե պարոն Տանական:

Վորպես «լավագույն, նույնիսկ միակ յերեւակայինի քաղաքական գիծ», վորը կարող է խանդարել Չինաստանում յապոնական թալանչիական պլանների համար այնքան վտանգավոր դեպքերի զարգացման, պարոն Տանական կայսրին առաջարկում եր «դրական ձեռնարկումներ, վորոնք յերաշխավորում են մեր իրավունքներն ու արտոնությունները Մանջուրիայում և Մոնղոլիայում». «Դրական ձեռնարկումներ»—այդ սաղմական բոնարդավումն ե, Չինաստանի հյուսիսային մարզերի քաղաքական և տնտեսական ստրկացումը Յապոնիայի կողմից, իսկ հետադայում—նաև ամբողջ Չինաստանի ստրկացումը: Անցած տասը տարվա ընթացքում յապոնական իմպերիալիզմը համառորեն ու լկտիարար իրականացնում եր այդ նախատակը, և նա արդեն կարողացավ կատարել Չինաստանի վերաբերյալ իր զարդելի պլանների կարեռքագույն մասը (Մանջուրիայի, Ճեխնիյի և այլ նահանգների բըռնապղավումը):

Սակայն պարոնայք Տանականները և կառավարող գինը որպական կլիկան ամենազլիսավոր բանում սխալվեցին իրենց հաշիվների մեջ: Տեղական և ոտարերկրյա միլիտարիստների ստրկացրած, անպաշտպան յերկրում յապոնական վայրագ ագրեսիան և ֆաշիստական սվինների սանձարձակ տեսորն արտղացրին չինական մեծ ժողովրդի զարթոնքը, ստեղծեցին յերկրի տնտեսական ու քաղաքական միավորման մի հզոր իմպուլս:

Յապոնական շատրւների և նրանց չինական վարձկանների բոլոր ճիգերը, վորոնց նպատակն է Չինաստանում ճղմել հեղափոխական և հակայապոնական շարժումը և չինական կենտրոնական կառավարությունը դարձնել հյու դործիք յալոնական իմպերիալիզմի ճեռքում, —չտովին այն արդյունքները, վորոնց սպառում, եր յապոնական զինվորականությունը: Անդամ' նոր, ավելի

նուրբ ու նենդ մեթոդները, վոր Յապոնիան փորձում եր կիրառել ասիական մայր-ցամաքում, «բարեկամության և խաղաղությունը պաշտպանելու նոր քաղաքականության մեթոդները», —մասնաւորապես Նանկինի կառավարության հետ վարած բանակցություններն եկոնոմիկական բնագավառում և կոմունիզմի դեմ պայքարելու գծով յապոն-չինական աշխատակցության մասին, —չընայելով սպառնալիքներին ու պրովակացիաներին, ուազմական անամությաման և առատ կաշառումներին, —սպարզապես վիժեցին, չնորհիս այն հանգամանքի, վոր ժողովրդի բոլոր խավերում և հոկայական մասսաներում բուռն թափով ուժեղացավ հակայապոնական շարժումը:

Այդ ժամանակ Յապոնիան փորձում ե բացահայտ ինտերվենցիայի սվիններով հաջողեցնել այն, ինչ վոր չեր հաջողվել կաշոքներով, պրովակացիայով և խորհրդակցական սեղանի շուրջը յեղած շանտաժով: Յեվ արդեն 1936 թվին նա ներխուժում և Սույուան, հարվածի տակ դնելով ամբողջ Հյուսիսային և Միջն Չինաստանը: Սակայն Սույուանի մարտիկների հետ ամբողջ չինական ժողովրդի պղպային համերաշխության չտեսնված վերելքի հետեանքով այդ լիտի փորձը հասցնում ե միայն Յապոնիայի բավական շոշափելի սաղմական պարտության: Սույուանում տարած հաղթանակը չինական ժողովրդին բերեց վստահություն իր ուժերի վրա, պարզ ցույց տվեց, վոր նա կարող է պատշաճ գիմարդություն ցույց տալ ազբեսորին, վոր Չինաստանում բավականաչափ կենդանի ուժեր կան նույնիսկ ամենախոշոր և աղահ իմպերիալիստական գիշատիչներից մեկի թալանչիական հարձակումները հետ մղելու համար:

Չինաստանում որեցոր ամրապնդվում և հակայապոնական շարժման հզորությունը և այդ շարժումն, ինչպես յերեք, ուժեղացնում և իր ազդեցությունը:

Սակայն այդ բոլորը վոչ մի կերպ չպետք է ստիպի մեղ թերապնահատելու ազատազրական ուժերի առջեւ յեղած դժվարությունները և Չինաստանում դործող թշնամական Փակտորները:

Չինաստանում ամենից առաջ, Փեոդալական մնացորդների հետ մեկտեղ չափաղանց ուժեղ են կառավարող կլիկաների այն ուեկացիոն և պահպանողական տարրերը, վորոնք յապոնական ազդեցություն են անցկացնում: Բացի դրանից, այնտեղ լայն

չափով տարածվել եւ յապոնական անմիջական գործակալների արհեստականորեն և խնամքով հյուսված ցանցը, — թե իշխանության գլուխը կանգնած Գոմինդանի կուսակցության ներսում և թե չինական պետական ապարատում։ Թեպետ հիշյալ հուշագրի բաժիններից մեկում պարոն Տանական առանձնապես շեշտում եւ, վոր «յեթե Յապոնիան չվճռի հաստատապես կիրառել արյան ու վոր «յեթե Յապոնիան չվճռի հաստատապես կիրառել արյան ու յերկաթի քաղաքականությունը, նա ի վիճակի չի լինի հաղթահարելու հայտնի դժվարություններն Արևելյան Ասիայում», սակայն քանի վոր այժմ չինական ժողովրդի լայն մասսաներում խիստ ուժեղանում է զիմագրությունը յապոնական ազգեսիային, յապոնական զինվորական կլիկան ստիլված և վնատել ավելի նուրբ մեթոդներ, ստիլված և «արյան ու յերկաթի» քաղաքականությունն առանց պատերազմի» քաղաքականության, այսինքն սվինների հարվածներ և չրետանային համազարկերը փոխարինել լրտեսների, դիները և բարեկանության համազարկերի ու դիվլումաների աշխատանքով, կաշառքով, շանտաժով ու սլույզակացիայով։

Ասենք ինքը, պարոն Տանական նույնպես չի հանդիսանում «ավելի նուրբ մեթոդների» սկզբունքային հակառակորդ, յեթե դրանք ապահովում են Զինաստանում յապոնական իմպերիալիզմի վայրիայած դիտավորությունների իրադորժումը։ Այսպես, նրա հուշագրի այն մասում, վորը նվիրված է Ներքին և Արտաքին Մոնղոլիայի (Մոնղոլական ժողովրդական Հանրապետության) նվաճման պլաններին, նա ասում է . . .

«. . . Այդ պլանը կիրառելու համար անհրաժեշտ է ուազմական մինիստրության գաղտնի ֆոնդից ծախսել մեկ միլիոն իյեն¹⁾ և Ներքին ու Արտաքին Մոնղոլիա ուղարկել պահեստ 400 սովա։ Այդ սպաները, ձևանալով չինացիներ, պետք է հանդիսական իրեն ուսուցիչներ, խառնվեն բնակչության, վստահություն առաջ բերեն մոնղոլական իշխանների մեջ, վորպեսզի այդ հանապարհով հիմք դրվի առաջիկա հարյուրամյակի ընթացքում մեր ազգային շահերի բավարարման»։

«Հաղթություն առանց պատերազմի» — դա Զինաստանը հեշտությամբ ու նրությամբ կլանելու նոր մեթոդների հոչա-

կալոր դարձած նկարագրությունն եւ, վոր պատկանում է Զինաստանում յապոնական հետախուզության գլխավոր որդանի զեկալիար, կվանտունյան բանակի «հատուկ սպասարկության» պետ գեներալ՝ Մացումուրոյին։ Այն գաղանի հուշագրում²⁾, վոր 1936 թվականին ներկայացվել եր Զինաստանում յեղած յապոնական գործակալների կոնֆերանսին (կվանտունյան բանակի շտարին առընթեր, Տոկիոյի գլխավոր շտարի ներկայացուցիչների մասնակցությամբ), նա պարզում է իր մեթոդը, իբրև չինական պետական ապարատի քայլայման, Զինաստանի միասնությունը վիճեցնելու, Զինաստանի ներսում յապոնական բաղմաթիվ գործակալներ ունենալու միջոցով չին ժողովրդի դիմագրությունը թուլացնելու մի նոր տակարիկա։ «Ամենաճիշտ ճանապարհը», — բացատրում ե նա, «զա այն ե, վոր ստեղծվող ինքնական և անկախ պետությունների գլուխը պետք ե կանգնեցնել ազգեցիկ (և իհարկե յապոնացիների կաշառած . . . Վ.) չինացիներին . . .

Այս պլանը Զինաստանում Հաջողություն ունենալու մեծ շանսեր ունի։ Նրա եյությունը կարելի յէ ձևակերպել իբրև «Հաղթություն առանց պատերազմի»։

«ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ»

Զինաստանի միջազգային դրությունը շատ լավ ըմբռնող, Հյուսիսային Զինաստանում և Ներքին Մոնղոլիայում Յապոնիայի ուժերին ու գրության միանդամայն իրազեկ, Հեռավոր Արևելքին քաջ ծանոթ և Ասիայի խաղաղ-ովկյանոսյան ամրող ափի յապոնական դաղտնի հետախուզության ամենափորձված զեկալիար գեներալ Մացումուրոյի հարաշալի հասկանում եւ, վոր բացահայտ ուազմական ներխուժումը և մայր ցամաքում չինական տերիստրիաների բռնազրագումը կարող և անժամանակ կոնֆլիկտ առաջ բերել ազրեսորի և Զինաստանի ստրկացումով շահագրգումած ուրիշ խմբերի համարիալիստական պետությունների միջև։ Բացի դրանից, նա մյուսներից ավելի լավ և տեսնում, թե

1) Յապոնական իյեն — 1ու. 51 կոս։
2) Հրապարակված է 1931 թվի փետրվարի 13-ին, Շանհայի ամերիկական «Չայնա Ռեկլի Ռեվյու» ժուռնալում։

ինչպես յապոնական անամոթ հարձակումը և տեռորի քաղաքականությունը Զինաստանում ունենում են այն հետևանքը, վորուսն թափով աճում և համաժողովրդական շարժումը հոգուտ հակահարվածի կազմակերպման, ստեղծվում և պայքարի միասնական ազգային հակայապոնական ճակատ։ Հաշվի առնելով նոր, ահավոր գործոնների ամրող վասանգը, վորոնք հետագայում կարող են յապոնական խմբերիալիզմի համար անհաղթահարելի գժվարություններ ստեղծել Զինաստանում, յապոնական քաղաքականության և լրտեսության մարզված վարպետն առաջադրում և չինական ժողովրդին նվաճելու մի նոր, նենդ ու քայքայիչ պլան, —Զինաստանի առանձին մասերի բռնազրավորմը իշխանության ապարատը մասսայական ծավալով կաշառելու, կառավարության և ռազմական ու անտեսական կազմակերպությունների բոլոր ողակներում յապոնական լրտեսներին, դիվերսանտներին ու պրովակատորներին լայն չափով տեղավորելու միջոցով նախապատրաստելու պլանը, չինական ամրող կառավարական ապարատը յապոնական հետախուզության գործակալներով լցնելու պլանը։

«Մեր խնդիրները Զինաստանում, —ասում ե Մացումորոյի հուշագիրը, —պետք ե հիմնվեն չինական լոկ անվանական հսկողության սկզբունքի վրա։ Այդ սկզբունքի հիմքն այն ե, վորպետք ե հրաժարվել Զինաստանի նոր տերիտորիաները զինվածութերով գրավելուց, վորովհետև այդ կարող ե միայն նոր բարդություններ առաջ բերել մեզ համար։ Ամենամիշտ ճանապարհն ե աղեցիկ չինացիներին նշանակել ինքնավար և անկախ պետությունների գլուխ։ Մենք մեր գործունեյության մեջ հիմա պետք ե ոգտվենք նոր մեթոդներով և հաջողեցնենք հետեւյալ նպատակները։»

1) Վերահսկողություն տեղական գանագան կառավարողների վրա, և նրանց ողնություն ցույց տալը հակայապոնական տարբերին ճնշելու համար։

2) Խստորեն հետևել և խանդարել յերկիրը միավորելու գործումին, ազգային ինքնապաշտպանության պլանների իրականացման, միասնական հակայապոնական ճակատի ստեղծման, ինչպես նաև խանդին խմբավորումների միջև միասնական ճակատ կազմելուն, —վորոնց գլխավորում են գեներալ-

ներ Ֆին Յույսյանը, Յան Սիշանը, Զժան Շյուե-լյանը և Հենական կարմիր բանակը։

Մացումուրոյի հուշագրի առաջին ենթից յերեսում ե, թէ յապոնացիներն իրենց «խնդիրների» լուծումը Զինաստանի ինչնոր տերիտորիաներն են փոխադրում և յապոնական հետախուզությունն ու ռազմական շարաներն ինչ նորագույն մեթոդներով են իրավործում չինական ժողովրդի ստրկացման նախապատրաստությունը։

«Այն բնակչությունը, վոր կկազմի մեր ապագա շուկաների չիմքը. (յեթե մենք հաշվենք ինքեյ, Շանդուն, Շանսի, Չախար, Սույսւան, Հենան և Շենսի նահանգները), հասնում ե 100 միլիոն հոգու, այսինքն յերեք անգամ ավելի, քան Մանջուրիայում։ Բացի դրանից, Հյուսիսային Զինաստանն ամրող Զինաստանի համար հանդիսանում ե հումք, —ածուխ, յերկաթ բամբակ, նաև և ցորեն մատակարարող։ Միանդամայն ակներեկ ե, վոր այն տերիտորիաները, վորոնք մենք գրավել ենք հումք ստանալու նպատակով, պետք ե սերտ կապվեն մեր կայսրության հետ։ Ահա թե ինչու Մանջուրական ոկուպացիայի յերի հենթարկվել. . . Յեթե մեր մանջուր-մոնղոլական քաղաքականությունն առհասարակ վորեւ բան և նշանակում, ամա դրա նպատակին այն ե, վոր առաջին տերիտորիայից հետո (Մանջուրիա) գրավվի յերկրորդը (Մոնղոլիա), վորի բացառիկ ստրատեգիական նշանակությունը մեզ ստիպում ե անընդհատ գործել այդ ուղղությամբ. . . Վերջին ժամանակներու սկզբան ե այն հատուկ գործականների պատրաստությունը, վորոնք, սակայն, դժկամությամբ են մեկնում Մոնղոլիա, այնտեղի կյանքի գժվար պայտմանների չնորհիվ. . .

Մեր ամանուղարկին, —հետախուզություններին Հյուսիսային Զինաստանի խորքերն ուղարկելով, մենք հաջողեցնում ենք այն, վոր զանազան յապոնասիրական տարրեր գործում են տարրեր կետերում։ Հենց դրանով մենք աստիճանաբար ձեռք ենք բերում մերահսկողություն Հյուսիսային Զինաստանի բոլոր զինվորական իշխանությունների վրա։ Տեղական աստիճանավորներին կան իշխանությունների վրա։ Տեղական աստիճանավորներին վորձական գեներալ մենք զբաղվում ենք մաքսանենգությամբ և կաշառումներով։

...Հյուսիսային Զինաստանում մեր գործականների գործու-

Նեյությունը շատ մեծ դեր խաղաց: Այդ գործունեյությունը պարզեց, վոր չինական աստիճանավորները զիջող են և ընդունակ չեն դիմադրելու: Սակայն այս հանդամանքը դժուհություն է առաջ բերում լայն մասսաների մեջ: Այն ժամանակից սկսած, յերբ Մանջուրիան ընկալ մեր վերահսկողության տակ, մենք նրա տերիտորիայում կրծատեցինք ակտիվ գործունեյությունը: Սակայն Հյուսիսային Չինաստանում, վորսեղ մեր գործակալները գործում են ավելի համարձակ և ավելի ապօրինի, քան այդ յեղել և Մանջուրիայում մինչեւ մուկդեհյան միջադեպը (Մանջուրիայի ոկուլացիան 1931 թվի սեպտեմբերին— Վ. Ս.), գործն այլ բնույթ ունի: Գործակալների այդ հոսանքը Մանջուրիայից դեպի Հյուսիսային Չինաստան պատշաճ էֆեկտ կտա»:

«ՊԱՏԵՐԱՋՄ ՄԹՈՒԹՅԱՆ ՄԵԶ»

Չինական յերկիրը ներքուստ պայմենների, կաշուքների, մատնությունների ու լրտեսության դժոխային ցանցով այդ յերկիրը պատելու, առանց «մեծ պատերազմի»—վորի համար Յապոնիան դեռ պատրաստ չե—Չինաստանը ստրկացնելու այդ պլանը Յապոնիան սիստեմատիկ և առանց քաշվելու կենսագործում և յապոնական գլխավոր շտարի բազմահազար հետախուզիչ գործակալության արյունոտ ձեռներով, դաշտանների, լրտեսների ու դիվերսանտների լայն, ոժանդակ ցանցի ոգնությամբ, — վորով նա պատել և ամբողջ Չինաստանը:

Ֆրանսիական «Կանդիտ» շարաթաթերթում, վոր լույս եր տեսնում 1935 թվի վերջին, Փրանսիական մի լրագրող հաղորդում և յապոնական մի հետախուզ սպայի չափազանց բնորոշ պատմածը:—

Արեւմտյան Չինաստանի քաղաքներից մեկի հյուրանոցում հանդիպեցին ոտարերկրյա յերկու առեւտրական և մի ոտարերկրյա լրտանկարիչ: Յերեքն ել չուտով զվիշ ընկան, վոր նրանցից ամեն մեկը լրտես ե, իսկ նրանց պաշտոնական պրոֆեսիան ծառայում և միայն իրրե լրտեսական աշխատանքի քողարկում: Լուսանկարիչը վորոշեց իր խորամանկությամբ գերազանցել իր «կուեգաներին»: Նա մյուս յերկուսին հրավիրեց ընթրելու, վորպեսզի հարրեցնի և վերցնի նրանց մոտ յեղած նյութերը: Սակայն վիսկիի ասաերկուերորդ բաժակը կոնծելուց հետո յերեքն ել

հանկարծ ընկան սեղանի տակ և քննեցին: Յերբ նրանք արթնացանք պարզվեց, վոր գողացված ե նրանց բոլորի գաղտնի փաստաթղթերը:

Յալոնական «առեւտրականն» այդ մասին զեկուցեց իր պետին: Վերջինս ծիծաղելով նրան ցույց տվեց կորած բոլոր փաստաթղթերը: Պարզվեց, վոր չինացի մատուցողը, վոր սպասարկել էր սեղանը, նույնպես ծառայում ե յապոնական հետախուզության: Նա քնարեր փոչի յեր լցրել բոլոր բաժակների մեջ:

Ինչպիսի՞ դերում ասես, վոր հանդես չեն զալիս յապոնական լրտեսները: Նրանք յերեան են գալիս իբրև առեւտրականներ, Փիրմաների ներկայացուցիչներ, Հոգեվորականներ, գիտնականներ, փողոցային մանրավաճառներ, լրտսանկարիչներ, մուրացիկներ, ուխտավորներ և գյուղացիներ:

Չինաստանի համարյա բոլոր քաղաքները հեղեղված են յապոնական հետախուզության գործականներով: Յալոնական բանակի բազմաթիվ աստիճանավորները և այդ բանակի շտաբների «հատուկ բյուրոների» աշխատակիցները հաճախ գտնվում են չինական պետական ծառայության մեջ, խորհրդականների, հրահանգիչների, դեցերնենաների և այլ պաշտոններում, գործում են իբրև զինվորականներկայացուցչությունների աշխատողներ յապոնական առեւտրա-արդյունաբերական ու ֆինանսական ձեռնարկությունների, կուլտուրական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Յալոնական շտաբների լայն գործակալությունն ընդերվում և յերկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, թափանցելով ամեն մի անկյուն, մերթ «անմեղ զբաղմունքների» պատրիակով, խանութպանների, սափրիչների վորջեր ու հյուրանոցներ, ափիոնի և հասարակաց տներ պահողների ցուցանակի տակ, մերթ տուրիստների, վանականների, առեւտրական շրջիկ գործականների, չինական Փիրմաների ինժեներների ու բժիշկների գիտնական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներ: Հաճախ լրտեսներն ուղարկվում են նաև հեղափոխական գործիչների դիմակի տակ,—վորոնք իբր թե գաղթել են Յալոնակայից կամ յենթարկվել են յապոնական վոստիկանական ոեժիմի խոսություններին:

«1936 թվականի վերջում Հենանի նահանգի խոշոր կենտրոնում, — հաղորդում ե Ա. Խամագանը «Յապոնական լրաեսաւթյունը հողվածում¹⁾», — Զժենչոռու քաղաքում հայտնաբերվեց յապոնական լրտեսական մի կազմակերպություն, վորը նախապատրաստում եր այդ նահանգի անջատումը Զինաստանից: Լըրտեսները քողարկել եյին իրենց գործունեյությունը, կազմակերպելով «կուլտուրական ասոցիացիա»: Ինչպես հետո պարզվեց, այդ «կուլտուրական ասոցիացիան» տեղեկություններ եր հավաքում չինական բանակի մասին, կազմակերպում եր «Հենանի ինքնավարության շարժումը», նախապատրաստում եր կամուրջների պայթեցում, յերկաթուղիների ավերում և վերջապես, ուներ մի գաղտնի ռադիո-կայան, վորի միջոցով լրտեսական ամբողջ ինֆորմացիան հաղորդում եր կվանտունյան բանակի շաբաթին:

Այստեղ, ուր չեն ոդնում սպառնալիքներն ու կաշառքները, յապոնական հետախուզները դիմում են ավելի «ուժեղ ներգործող միջոցների»: Յապոնական գործակալությունը կարողացավ իր ճանկը դցել Ներքին Մոնղոլիայի հայտնի իշխան Դէ Վանին: Սակայն գործակալների հետագա հայտագրությունը հանդիպեց մոնղոլական մի խումբ իշխանների համար գիմազրության, վորոնք ցցանկացան կամուլին մտնել յապոնական լծի տակ: Այդ խմբի մեջ մտնում եյին իշխաններ Սոն, Երեկ Սեչենան և Շալաբու Դորչին: 1936 թվի հոկտեմբերին, յերբ սկսեց նախապատրաստվել յապոնական հարձակումը Սույուան նահանգի վրա, «Հանկարծակի մենուում ե» Երեկ Սեչենը, ապա Շալաբու Դորչին: Դրանից մի փոքր առաջ տեղի յե ունենում իշխան Սոյի հանելուկային մահը: Սույուանի «Բառուութիրառ» թերթը հազորում ե, վոր իշխանների այդ խմբակը խիստ հակայազնական վոդով եր տրամադրված: Թերթն ավելացնում ե, թե իշխանները թունավորված եյին...

Յապոնական հետախուզությունն աշխատում ե խստօքեն մշակված մեթոդներով և սիստեմով: Վորպես կանոն, յապոնական հետախուզությունը գործակալների լայն հավաքագրում և կատարում:

1) «Բոլշեկ» № 11, 1937 թ.

Զինաստանի համար լրտեսներ ընտրելիս յապոնացիներից հայաքազրում են առաջին հերթին այն մարդկանց, ովքեր զիտեն չինարեն լեզուն, այդ յերկիրը և նրա սովորությունները: Առավելություն ե տրվում այն անձանց, վորոնք ծնվել են Զինաստանում ու յերկար ժամանակ ապրել այնտեղ: Զինացիներից հավաքագրվում են զինավորապես այն մարդիկ ովքեր սովորել կամ ծնվել են Յապոնիայում: Առաջին դեպքում հաշվի յե առնվույշ յերկիրը խորապես ճանաչելը, իսուելու ժամանակ առողջանության մմանությունը, վորոշ ասիմիլացիա, վոր յերբեմն գործակալին հնարավորություն ե տալիս իրեն ցույց տալ իրու Յապոնիայում ծնված կամ ապրած չինացի: Յերկրորդ դեպքում— Յապոնիայում չինացիների գտնվելու ժամանակ նրանց յերկարամե պատրաստումը և այլն: Դրա հետ միասին հետախուզիչ որդանները մեծ հաճույքով աշխատանքի յեն ընդունում յապոնացիներին— բուդյայական քահանաներին: Այդ գործակալներն ընդհանրապես լավ գիտեն չինական լեզուն, ծանոթ են Զինաստանի պատմությանը և կուլտուրային, իսկ դա զգալիորեն հեշտացնում ե նրանց լրտեսական աշխատանքը»:

1936 թվի հունվարի 1-ին Բեյլինում անսպասելի կերպով յերեան յեկալ «արքայազն Սույի տասերորդ աղջիկը» Մանչժու գինաստիայից: Յապոնիայի զինավորական շրջաններում «արքայազն Սույի աղջիկը» հայտնի յե իրու միսս «Կավաշիմա»:

Մինչեւ Մանջուրիայի բռնագրավումը նա զեկավարում եր ավազակային մի հրոսակախումբ, վորը գործում եր մանջուրժոնդոլական սահմանում: 1932 թվականին միսս Կավաշիման ամուսնացալ նանկինի կառավարության մի խոշոր աստիճանավորի հետ և ուղղմական կարեռ փաստաթղթեր եր մատակարարում յապոնական հրամանատարությանը, այսուհետեւ ապահովական տվեց և յերեան յեկալ Բեյլինում իրու «արքայազն Սույի տասերորդ գուստը»: Իրականում նա յապոնական բանակի գեներալ-մայոր Սույուամա Տագայի խորթ աղջիկն ե և սերտ կապված և «Սև վիշապի» հետ¹⁾:

1) Յապոնական ազդային (չովինիստական) գաղտնի կազմակերպություն, վոր լրտեսական աշխատանք և կատարում Յապոնիայում և արտասահմանում:

Յապոնական պլանների նույնպիսի գործիք եր նաև մոնղոլական իշխան Դե Վանը, վորը 1936 թվականի վերջում յապոնական սպաների գեկտալարած մանջուր-մոնղոլական հրոսակալյին «բանակի» գլուխն անցած, ներխուժեց Սույուան նահանգը:

Յապոնացիները չինական այդ բոլոր կաշառված քաղաքագետներին, աստիճանավորներին ու գեներալներին անվանում են «ոտար դաշտոյններ»:


Յապոնական հետախուզության գործունեյությունը չի սահմանափակվում չյուսիսով: Յապոնական հարյուրավոր լրտեսներ ե գիվերսանտներ հեղեղում են Չինաստանի նաև հարավյայն նահանգները: Աշխանը Ֆուցզյան նահանգը փոխադրվեցին յապոնական հարյուրավոր «ոռոնիներ», վորակների գյուղացիական հուղումներ առաջացնեն այդ նահանգում, այդ կերպ նախապատրաստելով «ինքնավար շարժումը»: Այդպիսի բանդաներից մեկն իրեն անվանում եր «Մին-Նան ինքնավար ուժեր» (Հարավյայն Ֆուցզյան), մյուսը — «Յերիտասարդ կամավորների կորպուս»: 1936 թվի մարտի 1-ին յապոնական հետախուզությունը Ամոյութ հրավիրեց իր չինական գործակալների խորհրդակցություն՝ Հարավյային Չինաստանում հետագա ձեռնարկումների հարցի շուրջը: Ֆուցզյան նահանգի բոլոր խոշոր կենտրոններում ստեղծվեցին յապոն-չինական «կուլտուրական մերձեցման և բարեկամության ընկերություններ», վորոնք յապոնական հետախուզության առաջադրություններով լրտեսական և գիվերսիոն աշխատանք են կատարում: Չինաստանի ամբողջ հարավում շարունակ ըրջադայում են յապոնական ինժեներների պատվիրակությունները, վորոնք գիտում և «ուսումնասիրում են» հանքահորերը, յերկաթուղիները, ելեկտրոկայանները, նավահանգիստները: Այդ շրջադայությունների մեկնակետ ե հանգիստանում մորմոզա կղզին: Ամբողջ ծովափի յերկարությամբ աշխատում են յապոնական լուսանկարիչները, քարտեզագրիները, հողաչափերը:

Յապոնական դլսավոր շտարի ուղմա-հետախուզական և պահնորդական վիթխարի ապարատը, վոր գործում և ասիական մայր-ցամաքում, Չինաստանի բռնագրավումը նախապատրաստելու իր աշխատանքում հենվում ե վո՛չ միայն Մանջուրիայի յապոնական ոկուղացիոն բանակի և Կորեայում դանվող բանակի շտաբների չափազանց ճյուղավորված հետախուզական որդաննե-

թի վրա, ոա լայնորեն ոգտագործում ե նաև Հյուսիսային Չինաստանում յեղած յապոնական կայազորների շտաբները, զինվորական ներկայացուցչությունները, դեսպանությունների կցորդները, յապոնական ամբողջ հյուղատոսական սպասարկությունը և այլն: Լրտեսական կադրեր պատրաստելու համար դվիսակոր շտաբը ստեղծել ե հատուկ դասընթացներ և դպրոցներ, և նամիջոցներ չի խնայում, լայնորեն ֆինանսավորում ե յերկրի թիկունքում տասնյակ հազարավոր յապոնական գործակալների, դիվերսանտների, տեռորիստների ու հետախույզների հավաքագրումն ու պատրաստումը, —իսկ դրանք հավաքագրվում են հայրենիքի մատնիչներից ու դավաճաններից, Փաշխտական վարձու բանդաների և տեռորիստական կազմակերպությունների անդամներից, —մասնավորապես նաև Փաշխտական շտաբների միջազգային լրտեսական-դիվերսիոն գործակալության, —չինական տրոցկիստների շարքերից, վորոնց գավաճանական զարգելաշխատանքի մասին ստորև մենք կիսուենք:

296
38





„ՍՊԱՆԻՐ ՈՒՐԻՇԻ ԴԱՇՈՒՅՆՈՎ“

ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԶԻՆԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Զինական ժողովրդին դավաճանելու կեղտուա գործում թապնական հետախուզությանն ոգնում են հայրենիքի և այլ դավաճանելը, — չինական խոչոր կարվածատերելը, վաշխառուներն ու կոմպրադորները¹⁾, յապոնացիների կողմից գնված չինական գեներալները և չինական հասարակության ամեն տեստի ապաղասակարգայնացված թափթփուկները, — պրոֆեսիոնալ բանդիտները, «կենդանի ապրանք» և թմբեցնող միջոցներ վաճառողները, մաքսանենդները: Դավաճանների այդ վոհմակը յապոնական բոլոր պրովակացիաների, դիվերսիոն և լրտեսական աշխատանքի սոցիալական բազան է: Յապոնական պահնորդական բաժինն այդ թափթփուկներից ստեղծում ե մարիոնետային «անկախ կառավարություններ» և «ինքնավար շարժումներ» առանձին նահանգներում: Հենց նրանք ել ծառայում են իրեւ սոցիալական բազա այն պայքարի համար, վոր Գոմինդանում յապոնասիրական տարրերը մղում են միասնական ազդային հակայտական մակարման միավորման և ազատագրության համար:

Կամկածից դուրս ե, վոր նույնիսկ չափազանց հայտնի և նաև կինի կառավարության մեջ «ազգեցիկ» բազմաթիվ չնացիներ ջերմեռանդությամբ աշխատում են գովեստի արժանանալ և

¹⁾ Կոմպրադոր— Զինաստանում տեղացի վաճառական, ապարերլրյա կապիտալի և տեղական չուկայի միջնորդ:

Հուղարքի պարզե ստանալ իրենց յապոնական տերերից և ուսուցիչներից: Այդ մասին ե վկայում Վան-Ցզին-վեյի ղեկավարած յապոնասիրական ուժեղ խմբակի և յապոնասիրական «Քաղաքական գիտությունների ուսումնասիրության ընկերություն» կուկայի մեջ մտնող մի քանի նաև կին յան մինիստրների վերջերս աճած ակտիվությունը: Զինական որենսդրական պալատի նախկին նախագահ պարոն Վան Ցզին-վեյը 1936 թվի վերջում վերադարձավ արտասահմանյան ճանապարհորդությունից, Գոմինդանի կենտրոնական գործադիր կոմիտեյի III պլենումին մասնակցելու համար (1937 թ. վետրվարի 15—22): Նա բերել եր Հիունիրի «Փյուրերի» անձնական հրահանդները և Զինաստանում յապոնական դեսպան Կալավոյեյի որհնությունները և նրան ուղեկցում եր գերմանական ծանր արդյունաբերության բարոններից մեկը, Ռոտո Վոլֆը: Պարօն Վանը յերդվելով խոստացավ «Փյուրերին», վոր Զինաստանին կոտիպի միանալ յապոն-գերմանական զինակցության, թույլ չի տա, վոր մի վորևե կոմպրոմիս լինի նաև կինի կառավարության և հակայտունական տարրերի միջև: Յերբ նա վերադարձել եր Զինաստան, յապոնական դեսպան Կալավոյեն բացահայտ կերպով աղջարարում եր, թէ վեհամիտ Վանի ազգեցությամբ Գոմինդանի կենտրոնական գործադիր կոմիտեն պետք ե ուժեղացնի յապոնասիրական քողաքականությունը և վորոշում ընդունի կոմունիստների դեմքայքարը շարունակելու մասին: Վանի հետ Զինաստան ժամանած պարոն Ռոտո Վոլֆը իր վրա վերցրեց ավելի քիչ աղմկալի վեր, Արևելյան Ասիայում յապոն-գերմանական պլանները անտեսապես հիմնավորողի դերը, վոր ապահովում ե յերկաթուղային շինարարությունը և զինքի մատակարարումը: Յեվ իսկապես, չնայելով Գոմինդանի կենտրոնական միջուկի մասնակիումի III պլենումի աշխատանքում յեղած մի քանի գրական մոմենտներին, այդ պլենումի վորոշումները պարզապես ցույց են տալիս, վոր Գոմինդանում և նաև կինի կառավարության մեջ գոյություն ունի յապոնաստերական տարրերի աղջեցությունը:

Յեվրոպական մեծ պատերազմից հետո յապոնական իմպերիալիզմին ծառայում են նաև մի շարք ուրիշ չինական քաղաքական խմբավորումներ, ինչպես, որինակ «Անֆու» կլիկան: Այդ խմբավորումների անդամներն այժմ ել հսկայական տարրերի աղջեցությունը:

ազդեցություն ունեն գոմինդանական հառավարության վրա։ Զինաստանում յաղոնասիրական չինովնիկներ կարգելու մեջ մեծ դեր խաղաց Զան-կայ-շի շտար-կայանի գլխավոր քարտուղար, Հուբեյի նահանդի կառավարության նախագահ, 1936 թվականի հոկտեմբերին սպանված Յան Ժուն-դայը, —«Քաղաքական գիտությունների ուսումնասիրության» ամենահին և ազդեցիկ անդամը։ Վան Ցղին-վեյի մոռիկ բարեկամը և զինակեցը, «Քաղաքական գիտությունների ուսումնասիրության ընկերության» ղեկավարներից մեկը, —Չժան Շի-չառն սերտ կապված է հակահեղափոխական տրոցկիստների հետ։ Ֆաշիստական շտաբների արյունոտ ընկերակցությունը, —Տրոցկի, Գեուստալու, յաղոնական ուսանողագլան բաժին, —իր բաժանմունքն եւ բացեքան Զինաստանում։

1936 թվի հոկտեմբերին չինական ամրող ժողովուրդը հողարկավորեց այդ յերկրի մեծ մարդկանցից մեկին, գրող Լու Սունին։ Նրան իրավամբ անվանում եյին «չինական Գորկի»։ Նա չին ժողովրդի ազատադրական պայքարի դրոշակակիրներից մեկն եր և Խորհրդային Միության անկեղծ բարեկամը։ Այդմ այդ մեծ ննջեցյալը կարծես վեր և կենում դադաղից և վկայություններ և տալիս այն հանցագործությունների մասին, վոր տրոցկիստները կատարել են Զինաստանում։

Իր ժամանակին չինական տրոցկիստների պարագլուխ Զին Դու-սյուն, տրոցկիստական կեղտոտ թերթուկների հրատարակիչը, փորձում եր ժողովրդականություն վայելող այդ գրողին՝ գրավել Տրոցկու «Քաղաքավարներով»։ Նրան այդ չհաջողվեց։ Լու Սունը դավաճանին տվեց յեռանդուն հակահարված, վորը վերջերս, արդեն հեղինակի մահից հետո, հրապարակվեց չինական գրեթե ամրող մամուլում։ Լու Սունը կծու հեղնանքով հերքում և տրոցկիստների բամբասանքը Խորհրդային Միության հացեյին և նրանց զբվելի, դավաճանական «թեորիան» այն մասին, վոր իբր թե «Յապոնիայի դեմ պայքարելու համար Զինաստանի բոլոր կուսակցությունների միավորվելը հանդիսանում է դավաճանություն հեղափոխության դեմ»։ Լու Սունն ապացուցեց, վոր Զինաստանում տրոցկիստների ապագիր հրատարակությունները յապոնացիք են Փինանսավորում։

«Զեր թեորիաներն անընդունելի յեն Զինաստանի ժողովրդ-

գական մասսաների համար»—յեղբավիկում ե իր պատասխանը Լու Սունը, —«Զեր գործողությունները վիրավորում են չինական ժողովրդի տարրական մարդկային արժանապատվությունը։ Ահա այն ամենն, ինչ վոր յես ձեզ կարող եմ ասել»։

Զինաստանում յեղած տրոցկիստները բոլոր տեսակետներէց հանդիսանում են ԽՍՀՄ-ում յեղած տրոցկիստական բանդիտների արժանի զինակիցները։

Ի թիվս այլ առաջադրությունների, որեր-բանդիտ Տրոցկին Խորհրդային Միությունում յեղած իր գործականներին հրամայի եր «վոչ մի արգելք չհարուցել յապոնական խմաների վիզմի կողմից Զինաստանը նվաճելուն» (Ժադեկի վկայությունները տրոցկիստական լրտեսական կենտրոնի դատավարության ժամանակ)։ Իր չինական գործակիցների համար Տրոցկին այդ խնդիրը ձևակերպել ավելի պարզ, — Զինաստանի միասնության վիճեցում, յապոնական ազգենիայի դեմ չին ժողովրդի դիմադրության թուլացում և ճնշում, չինական պետական ապարատի քայլացում։

Իր գործականների և բանդիտների (այսպես կոչված՝ «ոռնիների») առաջ նույն խնդիրներն եւ դնում նաև յապոնական դիմավոր շտարի բաժինը։ Պետք եւ ընդդեմ, վոր տրոցկիստական «ոռնինները» ձգտում են յեռանդով և ճշտությամբ կատարել յապոնական հետախուզության բոլոր առաջադրությունները։ Ազգային ցայտուն կերպով վկայում են նրանց գործողությունները Մանջուրիայի բնագրավման սկզբից սկսած։

Տրոցկիստները դավաճանորեն սողոսկում են հակայացոնտվան բանակի շտաբները և Յապոնիայի համար գողանում են կարսկորուպերատիվ ոլլանները։ Յերբ չինական գեներալները Թին Յու-սյանի և Ցի Խուն-չժանի բանակները փորձում եյին կալվանից դեպի հյուսիս դիմադրություն ցույց տալ յապոնական բանագրավիչներին, ինչպես հաղորդում եւ Փարիզում հրատարակվող հակայապոնական «Յղուղոշիբաս» չինական թերթը, դալմաճան Զժան-Մու-ղաոյի դիմավորած տրոցկիստական մի քանի յերկերեսանիներին հաջողվեց խցկել այդ բանակներէ չուաբը։ Նրանք յապոնացիներին հայտնեցին հակայապոնական բանակների պլանները, նրանց ինֆորմացիա եյին տալիս զորամասերի տեղափոխության մասին, չինական զինվորների մեջ

քայքայիչ աշխատանք եյին կատարում և քիչ աշխատանք չթափեցին, վորակեսղի ողնեն յանոնական ինտերվենտներին: Զինաստանի կոմկուսակցությունը մերկացրեց տրոցկիստական այդ վոհմակին և նրան արտաքսեց իր շարքերից:

Տրոցկիստները ստեղծում են սե-հարյուրակային բանդուներ՝ հակայապոնական ժողովները վիժեցնելու համար: Յաղոնիայի հանձնարարությամբ նրանք կաշառում են չինական քաղաքական գործիչներին, մահափորձեր են կազմակերպում, ալարթեցնում են ռազմական պահեստները և այլն:

Յապոնիայի հանձնարարությամբ Զժան Մու-դառն և տրոցկիստները գեներալ Ֆինին առաջարկել են դրամական մի խոշոր գումար, փորձելով ոպտագործել նրան, Նանկինի կառավարության դեմ դավադրություն կազմակերպելու համար: Սակայն գեներալ Ֆինը լայն հասարակության առջև մերկացրել է այդ դավաճանական պլանները:

Նանկինի կառավարության դեմ կանոնի խոռվության ժամանակ վերև հիշված դավաճան Զժան Մու-դառն փորձում եր յապոնական իմպերիալիզմի և կանոնի գեներալների մեջն միջնորդի դեր խաղալ:

1936 թվականի կեսերին տրոցկիստները հակակոմունիստական պրոպագանդ եյին մղում գեներալ Են Սի-շանի ջոկատներում, —վորն ուղարկված եր Շանսի նահանդում յեղած ժողովրդական կարմիր բանակի դեմ: 1936 թվի ամառը այդ նույն տրոցկիստները, խցկվելով զանազան հակայապոնական կազմակերպությունների մեջ, ռեակցիոն գեներալների ճանկը զցեցին չորս հակայապոնական մարտնչողներ, վորոնց թվում Տայուանթօքնակարգ դպրոցի 40 աշակերտներ: Այդ 300 հոգին մահապատճի յենթարկվեցին:

Տրոցկիստները փորձում եյին սարուաժի և քայքայիչ աշխատանքի միջոցով Զինաստանի Առաջրդարակին շրջաններում թուլացնել ժողովրդական կարմիր բանակի հորությունը: Տրոցկիստ Վան Ցզին-առանի գործակալները Հունան և Հուբեյ նահանդներում պրովակացիայի եյին յենթարկում ժողովրդական կարմիր բանակը, մղելով դեպի աննպատակ կամ պարզապես անհուսալի գործողություններ ու յելույթներ: Յերբ այդ պրավակացիաները վիժեցին, նրանք փորձ արին ապօտամբ թու-

ներ առաջ բերել բանակում: Զախողվեցին այդ փորձերը, ինչպես նաև «նոր կոմունիստական կուսակցություն» ստեղծելու պլանը:

Զինական խորհրդային շրջաններում հաջողվեց հայտնարերել տրոցկիստների կազմակերպած մի խմբակ բժիշկներից, վորոնք պետք է թունավորելին կամ հաշմանդամ դարձնելին իրենց մոտ բուժվող կարմիր հրամանատարներին ու կարմիր բանակայիններին:

Մի շաբաթ վնասարարական գործողություններ, վոր հայտնաբերվեցին ռազմական գործարաններում, և ժողովրդական կարմիր բանակի համար հաղուստեղեն և այլ իրեր պատրաստող արհեստանոցներում, —նույնպես տրոցկիստների ձեռքերով եյին կատարվում:

Խորհրդային շրջանների գյուղացիական մասսաների մեջ դժգոհություն առաջ բերելու համար յապոնական իմպերիալիտմի այդ գործականները փորձում եյին առանձին վայրերում կատարել սահմողական կոլեկտիվացում և գրավել գյուղացիների անասունները:

Ազգային փրկության համաշխական միավորության միջերներից մեկը, Զժան Նայցպին, վոր չինական հայտնի տնտեսագետ և գրող, 1936 թվի սեպտեմբերին Շանհայի «Կոնտենպորերի Ֆորում» թերթում գրում եր հետևյալը:

«Յեղորապական տրոցկիստները կանգ չեն առնում Փաչիստական Գերմանիայի ողնությամբ և մասնակցությամբ Խորհրդական Սիության վրա հարձակվելու առաջ: Հեռավոր Արևելյան վրամական կազմակերպությունների հետ ընդգեմ Խորհրդային Սիության, նրանք աշխատում են Զինաստանի յապոնակարական կառավարական չինովնիկների հետ միասին... Զինական տրոցկիստները գտնում են Զինաստանը մասնակից զարձնել ադրեսորների հակատին, վոր ուղղված է ԽՍՀՄ դեմ: Նրանք ուղղում են Զինաստանը յենթարկել Յապոնիային և հենց դրանով չինական ազգը դատապարտել վոչնչացման: Նրանց հանցանքներն այնքան հրեշտավոր են, վոր արյունով անդամ չի կարելի քավել»:

ԿԱՇԱՌԻ, ԱՓԽՈՆ, ԹՈՒՅՆ

Յապոնական պահնորդական բաժնի բանդիտական-տեսուրիստական նշանաբանը— «Սպանիր ուրիշի դաշտույնով»— վոք փոխ և առնված մոլեուանդ միջնադարից, Զինաստանում յապոնական հակա-հետախուզությունը ուելիդացիայի յե յենթարկուա հայրենիքի դավաճանների աջակցությամբ, ամենազգվելի պրի-յոմների, պրովակացիանների, կաշառումների ու լրտեսության մի ամբողջ սիստեմի միջոցով։ այսոր դա այստեղ սարսափելի ձեւը և ընդունում։ Այսպես, չինական ժողովրդի դիմադրությունը թուլացնելու և աշխատավոր մասսանների հետադա կողպատման ու ստրկացման համար յապոնական բռնադրավիճեցները և նրանց գործակալներն ոկուպացիայի յենթարկված րոլոր մարզերում անմիջապես ծավալում են թմբեցուցիչ միջոցներ վաճառող խանութների, լոմբարդների, խաղատների և հասարակաց տների իիտ ցանցը։

Ափիոնի ընդարձակ և ավելի ու ավելի աճող առևտուրը, վոր փաթթված և չին ժողովրդի¹⁾ վզին, վաղուց ի վեր հարակցել և իմպերիալիզմի ներթափանցման ու ամբապնդմանը Զինաստանում։ Այժմ յապոնական ոկուպանտները գեռևս չտեսնված մասշտարկերով ամբողջ Զինաստանում ծավալում են թմբեցուցիչ միջոցների առևտուրը։ Պաշտոնական վիճակագրության համարական միջիայն, միմիայն Մուկլենում ներկայումս թմբեցու-

1) Անդիխական իմպերիալիզմը XIX դարի սկզբում թնդանոթների միջոցով Զինաստանին ստիպեց թույլ տալ ափիոնի անսահմանափակ ներմուծումն ու առևտուրը։ Դա զգալիորեն նպաստեց չինական կայսրության տնտեսական ու քաղաքական անկումին, հասցրեց յերկրի աշխատավոր մասսանների չափազուծումն ուժեղացնելուն և աղքատացման։ Զինաստանում 1839—41 թվականների առաջին այսպես կոչված՝ «ափիոնային պատերազմ» հետևանքով Անդիխան կարողացավ նորից ընդլայնել իր իրավունքները Զինաստանում ափիոն ներմուծելու համար և ապա յերկրորդ «ափիոնային պատերազմում» Անդիխան ու Ֆրանսիան վերջնականապես հաստատեցին չին ական ժողովրդին թունավարելու իրենց անսահմանափակ իրավունքը։

ցիչ միջոցներ վաճառող խանութների թիվը հասնում է մոտ 1000-ի, Խարբինում—ավելի քան 700, Դիրինում և Անտունում—800-ական, իսկ ավելի մանր քաղաքներում— վոչ պակաս, քան 300—400-ական խանութ։ Թմբեցուցիչ միջոցների խանութների հետ սերտ կապ ունեն յապոնական «քաղաքակրթիչների» տարածած՝ վաշխառուների լոմբարդները, թղթախաղերի վորչերը և հասարակաց տները։ Հաճախ այդ բոլոր «հիմնարկությունները» տեղավորվում են մեկ չենքում սերտ և կոնտակտ աշխատում են «ժաղովրդին թմբեցներու և կողովատելու համար»։

Թմբեցուցիչ միջոցներով գրավվելու հիվանդության գեմ, վոր Զինաստանում մասսայական բնույթ և ստանում, ամեն մի պրոպագանդա արդելվում և յապոնացիների կողմից, համարվելով «ափետության համար վտանգավոր» բան։ Ոկուպացիոն իշխանությունների աջքում «հուսալի» յեն համարվում միայն այն չինացիները, վորոնք ափիոն են գործածում, գերոին¹⁾ են ներարկում և փողով թուղթ են խաղում։ Խխանությունները չին գյուղացիներին ստիպում են ի հաշիվ հացահատիկային կուլտուրաների հետզհետե ընդլայնել կակաչի ցանքերի տարածությունները։ Միմիայն ժեկան նահանգում, յապոնական ոկուպացիայի մի միայն մեկ տարվա ընթացքում կակաչի ցանքերն ավելացել են 20 անգամ։ Այդ նահանգում ամբողջ ցանքային տարածության մասը ներկայումս բռնում են թմբեցուցիչ միջոցներ տվող բաւյաների ցանքերը։ Վերջին հաշվով դա հասնում է գյուղացիության կարիքի կատաստրոֆիկ տճման, քանի վոր գյուղացիությունը ստիպված և կամ քաղցած մնալ, կամ բարձր գներով պարենամթերքներ գնել յապոնական մոնոպոլ խանութներում։

Զինաստանի հսկայական տերիտորիաներում թմբեցուցիչ միջոցների գործածության աճը յապոնական իմպերիալիզմին բերում է ահազին լրացուցիչ յեկամուտներ, վորոնք այնուհետեւ հիմնա-

¹⁾) Թմբեցուցիչ բաղադրություն։ 1 կիլոգրամ դերոինի մը-թերման գինն է 150 իյն, բայց կլինտներին վաճառվում ե կի-րոն 15000 իյնով։ Ափիոնի բերքը հավաքելիս կառավարական գործակալները չին գյուղացիներին վճարում են 20 ցենա մեկ միանի (մոտ 35 գրամ) համար, իսկ ափիոնի ցանքի 1 մու-ի (0,6 կեկտար) հարկը կազմում է 5 դոլար։

կանում ովտագործվում են սպառազինումներն ավելացնելու համար։ Միևնույն ժամանակ այդ աճումը քայլայում է չինական ժողովրդական տնտեսությունը, ամեն տարի հարյուրավոր ժողովրդակային կյանքեր ե կործանում և բնականաբար թուլացնում ե յապոնական ազգեսիային Չինաստանի ժողովուրդների գիմարության ուժը։

Վերևում մենք բերինք Չինաստանում յապոնական հետախուզական ծառայության ղեկավար գեներալ Մացումուրոյի գաղտնի հուշագրի մի մասը, վոր հրապարակված և յեղել Շանհայի «Զայնա Ռեկլի Ռեվյու» ժուռնալում և վորտեղ Մացումուրոյն հանդում և այն յեղակացության, թե «Արտեսների մեր ավանդարդն ուղարկելով Հյուսիսային Չինաստանի խորքերը, մենք հաջողեցրինք այն, վոր զանազան վայրերում յապոնաբարեկան տարրերը սկսում են ակտիվություն ցուցաբերել, վոր այդ ճանապարհով մենք աստիճանաբար մեր ձեռքն ենք առնում վերահսկողությունը Հյուսիսային Չինաստանի բոլոր զինվորական իշխանությունների վրա»։ «Տեղական աստիճանավորներին փորձելու համար, — զրում և մարզված հետախույզը, — մենք զրադշեցինք նաև մաքսանենդությամբ և կաշառումներով...»

Լրտեսության գեներալը չի խարում իր տերերին։ «Ուրիշ ձեռքով սպանելու» ստոր մեթոդը, վորին կատարելապես տիրապետում և յապոնական հետախուզությունը, արդեն նկատելի արդյունքներ և տալիս։ Յապոնացիք իրենց չինական մեծ ու փոքր գործակալների ոգնությամբ կարողանում են լայն չափով քաղաքական ու տնտեսական ազրեսիա գործադրել դեռևս չըրավղած չինական մարզերում, կազմակերպելով մասնավորապես յապոնական մաքսանենդ ապրանքների մասսայական ներմուծում։ Մաքսանենդ առևտուրն այստեղ նպատակ ունի կաշառումների միջոցով վոչ միայն բարոյալքել չինական աստիճանավորությունը, այլև վիժեցնել Չինաստանի ժողովրդական անտեսությունը, նրա տնտեսական կազերն ուրիշ յերկների հետ, վիժեցնել առևտուրական և ֆինանսական կյանքը ագրեսիային դիմադրող նահանջներում։ «Արևելյան չերելի ինքնավար հակառակություններին կատարեցի» նախագահ, չինական «պետական գործիչ» ին ժուռ-գենը մաքսանենդ ապրանքներ ներմուծելու գործում յապոնացիներին ոգնություն ցույց տալու ամեն

ամիս մոտ յերկու միլիոն դոլար ե ստանում։ Չինական աստիճանավորների նման ծախվածության և զինվորական բռնություն գործադրելու հետևանքով, 1936 թվականի յերկորդ յեռամսյակում մաքսանենդ ապրանքները (վոր հաճախ ուղարկվում են յապոնական հրետաձիգ նավերի հսկողությամբ) կազմեցին Չինաստանի ամբողջ ներմուծման մեկ յերրորդ մասը։

Զկա մի այնպիսի զգելի հանցագործություն, վորի սուաչկանդ առնեն յապոնական «կուլտուրալիերները», իրականացնելով իրենց ավագակային պլանները։

Յապոնական զինվորական հրամանատարությունը Հյուսիսային և Հյուսիս-Արևմտյան Չինաստանի բոլոր քաղաքներում բոլորովին բացահայտ կերպով պահում և «հատուկ բաժիններ», այսինքն ռազմական շտաբների հատուկ բյուրոներ, վորուսք լրտեսական, պրովոկացիոն և տեսորիստական լայն աշխատանքն կատարում։ Վերջին ժամանակներս այդ բյուրոները կազմակերպեցին մասսայական սպանություններ Սիչուան, Հուեյ և Հունան նահանգների քաղաքացիական բնակչության մեջ։ Այդ բյուրոների գործակալները, վոր մեծ մասամբ յապոնացիների կաշառած և հավաքագրած չինական բանդիտներ են, «հատուկ բաժիններից» առաջադրություններ ենին ստանում— այդ նահանգների բնակչության մեջ խուճապ և հուզումներ ստեղծելու և բնակիչներին տեսորի յենթարկելու համար թունավորել սննդամթերքները և խմելու ջուրը կամ ինեկցիոն սրոկիչի միջոցով բնակիչներին սպանել շուկաներում և ժողովրդի կուտակման տեղերում։

Իրեն շրջանում և Սիչուան նահանգի մյուս վայրերում յապոնական լրտեսական բյուրոների գործակալները բարեխողացնությամբ և ճիշտ կատարեցին հանճնարությունը, թունավորելով հարյուրավոր մարդկանց և այստեղ ստեղծելով աննկարգերելի խուճապ։

Արևմտյան Հունանում յապոնական նույնպիսի պրովակացիաների և դիվերսիաների զոհեր դարձան հաղարավոր աղարդիկ, կանայք ու յերեխաներ։ Ինչպես հաղորդում է Հոնկոնգի «Գունչանշիբաո» թերթը 1936 թվի ոգնուտոսի 20-ի համարում, այդ նահանգում գյուղական տանուտեր Չենը հաւիսի 17-ի յերեկոյան Սիպին գյուղում (Լուն-Շինի շրջան) բռնկու


նացի մի տղամարդ և մի կին, այն մոմենտին, յերբ նրանք փորձում ենին ինելցիոն սրսկիչի միջոցով թունավորել մարդկանց։ Դատարանում յերկու բռնվածներն ել խոստովանեցին, վորուարկված են յեղել յապոնական «Հատուկ սպասարկության» կողմից։ Նրանք նաև խոստովանեցին, վոր այդ ըջանում թունավորել ենին խմելու ջուրը, և մատնացոյց արին յապոնացիների մի շարք ուրիշ գործակալաներին, վորոնք նույնպիսի հանձնարարություններ ենին կատարում։ Այդ գործակալաներն իրենց զաղցելի աշխատանքի համար ստանում ենին կայուն ամսավարձ և «մարդագլուխ» պարզե, որինակ, յուրաքանչյուր թունավորված յերեխայի համար նրանց վճարում ենին Յուլլար։

Յապոնական իմպերիալիզմի գաղանացած սատրապներն այսոր առանց տատանվելու, ամենաբազմազան, արյունու ու անպատկառ մեթոդներով կիրառում են յապոնական ֆեոդալիզմի ժամանակների ավազակային շայիկաների նենք մեթոդը, — «Սպանիր ուրիշի գաշուննով» քատմնելի կանոնը։

1935 թվականի վերջում, յերբ յապոնական բոնագրավիշներն իրենց չինական գործակալների ոժանդակությամբ և ողոնությամբ Զերեյ և Զախար նահանդներում «ինքնավար կառավարություններ» ստեղծեցին, ուրիշ յերեք, հյուսիսային նահանդներում — Սույուանում, Շանսիում և Շանլունում նույնպիսի «ինքնավարություններ» սահմանելուն խանդարեց հակայուպոնական հզոր շարժումը։ Իրենց ունեցած անհաջողությունից կատաղերով, յապոնական միլիտարիստները ձեւնամուխ յեղանչուած, զաժան տեռորի միջոցով այդ շարժումն արմատախիլ անելուն։ Բեյլինի փողոցներում յապոնական ժանդարմները տասնյակներով ձերբակարում ենին ժողովրդական գործիչներին։ Նրանք ներխուժում ենին 29-րդ բանակի հակայապոնական տըրամադրություն ունեցող սպաների բնակարանները և նրանց տանում ենին իրենց հետ։ Նրանք գրավեցին Մինդո համալսարանի շենքը, դպրոցներում բազմաթիվ շուրջկալներ կատարեցին, փնտրելով «վտանգավոր» մտքերով հայտնի ուսանողներին ու պրոֆեսորներին, չինական սպաներին և խաղաղ քաղաքացիներին, վորոնց բանտերը նետեցին առանց դատարանի և քննության, միմիայն այն կառկածի հիմունքով, վոր նրանք կարող են հակայապոնական արամադրություններ ունենալ։

Եերբ նանկինի կառավարությունը մասսաների ճնշման տակ բողոքեց այդ կամայականության դեմ, յապոնական հրամանաւարությունը համաձայնվեց խստությունները և հաշածանքները դադարեցնել միայն այն դեպքում, յեթե չինական վոստիկանությունն ինքը կատարի յապոնացիներին հարկավոր և նրանց մատնանշած ձերբակալությունները։ Բեյլինի, Տյանցգինի, Հանկոույի, Շանհայի և այլ քաղաքների չինական վոստիկանապետերը դարձան հու գործիք յապոնացիների ձեռքում։ Նրանք բանտերը նետեցին հակայապոնական տրամադրություն ունեցող հարյուրավոր բանվորներին, ուսանողներին ու վաճառականներին։ Նրանք հրամայում ենին անխնա գնդակալոծել հակայապոնական ցույցերը։ Նրանք հրամայում ենին բանտերում գաղանային խոշտանդումների յենթարկել հակայապոնական մարտիկներին։ Բեյլինում, Տյանցգինում և չինական այլ քաղաքներում ծախավոր վոստիկանությունը դարձալ յապոնական վարձու մարդասպանների (վերոհիշյալ «ոռնինների») միանդամայն արժանի պինակիցը, — վորոնք յապոնական հրամանատարության ցուցումով հափշտակեցին կամ գաղտնի սպանեցին հարյուրավոր հակայապոնական մարտիկներին։

Չինաստանում բարձրանում է ժողովրդական ցասման մեջը — յապոնական բոնագրավիշների և սրանց չինական գործակալության, — ուազմական հետախուզության «ուրիշի գաշույնի» դեմ։ Անսահման և զայրությը գավաճանների դեմ, վորոնք փոտից դլուխ շաղախված են ժողովրդի արյունով։ Մասսաների մեջ խորն արձագանք և դտնում հակայապոնական մարտական կազմակերպությունների պահանջը — Գինաստանի դավաճաններին և դահիճներին հանձնել ժողովրդի դստին։



„ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՀՈՎԻՏԾԼ“

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ «ԽԱՂԱՂ» ՖՈՆԸ

Շատպելով Մանջուրիան դարձնել ապագա «մեծ պատերազմի» թատերաբեմ, յապոնական միլիտարիստները տեսնդային կերպով նոր ստրատեգիական յերկաթուղիներ և ալտոմորիլների խճուղիներ են կառուցում¹⁾) Այն հողերը, վորտեղից անցնում են նոր յերկաթուղադժերն ու խճուղիները, չինացի հողատերերից գրավվում են առանց վորեւե հատուցման,— բնակիչներին ուղղակի արտաքսում են աներից: Այդ յեղանակը դործադրվում է ամենուրեք, ուր յապոնական բռնադրավիչները հողամասերի կարիք են զգում, անկախ նրանից, թե դրանք ինչ նպատակով պետք է ոգտագործեն,— զորանոցների, ռազմական գործարանների, այերողը մունիսերի, ամրությունների կառուցմանը, իրենց կոլոնիատների բնակեցման, ռազմական գոտիների համար և այլն: Զինական հողատերերից սովորաբար «կոնֆիսկացիայի յերեթարկվում» ամենաըրդավանդ վարելահողը, ինչպես այդ յեղավ, որինակ, Միշան, Իլան, Ցղյամուսի, Դումյան և Բոլի ըրջաններում: Այդ ըրջաններում բակերի բոլոր չենքերը և բնա-

կելի տները վառում են: Ուրիշ գեղքերում (Անդունում և այլ ըրջաններում) յապոնացիները «գնում եյին» հողը... դրա ինկական արժեքի 5 տոկոսով:

Յապոնական ոկուպանտները բնակչության ուղղակի թաշանի մեթոդները լրացնում են ուեկվիզիցիաների և հարկադիր աշխատանքների միտեմով: Բռնադրավիչների ռազմական ջոկատները գյուղական տանուտերերից անդադար պահանջում են հսկայական քանակությամբ անասուններ, ձիեր, սայլեր և կեր,— ռազմական կարիքների համար: Այդ բոլորի դիմաց իւարկե վոչինչ չի վճարվում կամ վճարվում ե ծիծաղելիության չափ ցածր գին: Մի շարք ըրջաններում չինական յուրաքանչյուր ընտանիք պարտավոր ե ռազմական չինարարական աշխատնքների համար ներկայացնել «մեկ ուժեղ տղամարդ»:

Յապոնական ոկուպացիոն իշխանություններն անում են ինչ վոր հանրավոր ե, վորպեսզի գյուղատնտեսության մեջ ամրապնդեն և ուժեղացնեն ֆեոդալական մնացորդները: Ավելի և ավելի անտանելի յեն դառնում նաև Մանջուրիայի գյուղացիներից գանձվող տուրքերն ու հարկերը: Այդ յերկրի ոկուպացիայից հետո հողի վարձավճարը տասը մու¹⁾—ի համար 7,5 դոլարից բարձրացավ մինչև 17,2 դոլար: Գյուղացիների վրա դըրքած հարկի ընդհանուր գումարը կազմում ե գյուղացիական անտեսության ամբողջ յեկամտի 20 տոկոսը, նախկին 8 տոկոսի ժողովարեն:

Յապոնական ոկուպանտների թաթի տակ Մանջուրիայի գյուղատնտեսությունն անընդհատ ընկնում է: 1 ալոր (40 ար) շողի միջին յեկամուտը 1930 թվականին կազմում եր տարեկան 122 դոլար, 1934 թվականին— արդեն միայն 57 դոլար: Տարեց-տարի կրճատվում և Մանջուրիայի ցանքերի տարածությունը և պակասում ե բերքը: Նույնիսկ պաշտոնական ովկյալների համաձայն, սոյացի ընդավոր բույսերի արտադրանքը, վոր հսկայական նշանակություն ունի Մանջուրիայի ամբողջ ժողովրդական տնտեսության համար, յապոնական ոկու-

1) 1 մուն 0,6 հեկտար ե: Այստեղ, ինչպես և մյուս եջերում, չիշվում ե չինական արծաթե դոլարը, վոր հալասար և 1,52 ռուբլու:

¹⁾ 1936 թվի վերջում Մանջուրիայում կառուցված եր 2246 կիլոմ. նոր յերկաթուղադիծ և 4500 կիլոմ. ալտոմորիլի խճուղի:

պացիայի առաջին յերեք տարում կրծատվել և 37 տոկոսով:
Բոնադրաված մարդերի բնակչության համար առանձնապես
ծանր դրություն և ստեղծում գյուղատնտեսական մթերքների
առետրի մենաշնորհը, վոր մտցրել են յաղոնացիները։ Այդ մե-
նաշնորհը վեշնականապես քայլայում և հաղարավոր գյուղա-
ցիական տնտեսություններ։

Յապոնական ոկուպանտների 6 տարվա տիրակալության
հետևանքով՝ Մանջուրիան անընդհատ աղքատանում և, նրա
անտեսությունը քայլայլում և ու թալանվում, ժողովուրդը՝
կործանվում է։ Այդ մարզերում սովորական և հետեայլ պատ-
կերը, — քաղաքներում ու գյուղերում թափառում են Հարյուր
հաղարավոր մուրացիկներ, — տղամարդիկ, կանայք ու յերեխա-
ներ, վորոնք դրկված են սննդից ու ոթևանից, գոյության
վորեւ միջոցից։ Զարմանալի չե, վոր Մանջուրիայի տասնյակ
հաղարավոր հուսալված ու սովալլուկ բնակիչներ տարերաց-
նորեն կազմում են պարտիզանական ջոկատներ և մասնակցում
հայրենիքը բռնադրավողների դեմ մղվող համառ, զինված պայ-
քարին։

Իմանական ալան-թալանի ասպետները տիրապե-
տել են ցամաքի և ծովի հաղորդակցության բոլոր միջոցներին։
Նրանք ամբողջովին իրենց են յենթարկել յերկրի ամբողջ ապ-
րանքշընառությունը։ 1932 թվականից սկսած՝ յաղոնական
արդյունաբերական ու ֆինանսական ակուլաները սիստեմատի-
կաբար իրենց ձեռքն են վերցնում արդյունաբերության բոլոր
կարևորագույն ճյուղերը, յերկրի բոլոր արտադրական ույժե-
րը։ Յապոնական կապիտալը ռազմական բռնության կամ լիսի
հափշտակության միջոցով ամենուրեք վարում և չինական աղ-
գային կապիտալը կամ զավթում ամբողջ վերահսկողությունն
այդ կապիտալի վրա։ Այսպես, որինակ, մինչև ոկուպացիան
եարբինում կար ավելի քան 60 չինական արդյունաբերական
խոշոր ձեռնարկություն։ Հիմա դրանցից մնացել և 20-ը։ Աղո-
րիքային արդյունաբերությունը, վորաեղ գերակշռում եր չինա-
կան կապիտալը, հետզհետե մեռնում է։ Մանջուրիայի հանուր-
գային և վերամշակող արդյունաբերության ու գյուղատնտեսու-
թյան բոլոր հիմնական ճյուղերը, — սոյայի ընդավորների, կա-
զաւ, վոչխարի բրդի, բամբակի, սպիրաի արտադրությունները,

նավթի, ծծումբի և այլ նյութերի հանուրդը, — կամ աստիճա-
նաբար առնված են պետական վերահսկողության տակ, կամ
հայտարարված են իրեւ պետական մենաշնորհ¹⁾։ Առհասարակ
ներկայումս Մանջուրիայում պահպանվում են արդյունաբերու-
թյան միայն այն ճյուղերը, վորոնք կապված են Յապոնիայի
սպառապինման հետ կամ մայր-ցամաքում կարող են ուժեղացնել
նրա ուազմական ալբեսիան։

Մանջուրիան սիստեմատիկորեն հեղեղվում և յաղոնական
եժան ասլրանքներով՝ յապոնական գեմպինդով²⁾։ Դա քայլա-
յել և վոչ միայն մի շարք չինական արդյունաբերական և
առևտրական խոշոր ձեռնարկություններ, այլև վերջնականապես
վնաս և հասցրել տեղական արհեստաներին և Զինաստանում մի
ժամանակ հակայական չափով զարգացած մանր առևտրի ցան-
ցին։ Այսուղ, ուր յապոնական գաղութային ծովահեններին չի
հաջողվում յերկիրը թալանել առևտրա-արդյունաբերական և
Փինանսական-բանկային գործադրքների սիստեմի միջոցով,
նրանք չեն ճնշվում գործադրելու ուղղակի զինված բռնությու-
նը, վոստիկանական մտրակը։ Այս ճանապարհով նրանք մուրա-
ցիկներ են գարձրել բազմահազար վաճառտիկաններին, մանր
արտադրուներին, արհեստավորներին։

Մանջուրիայում նոր աերերը բանվորների հետ վարվում են
ինչպես գաղութային ստրուկների հետ։ Արդյունաբերական

¹⁾ Մանջուրիայի գաղութային ստրկացման գործում առանձ-
նահատուկ դեր եր խաղում Հարավ-Մանջուրական յերկաթու-
ղային ընկերությունը, վորի միջոցով և անցնում Մանջուրիա
ներմուծվող յաղոնական ամբողջ կապիտալի մինչև 75%-ը և վո-
րին Փինանսական գծով յենթարկվում են այդ յերկրի արդյու-
նաբերության ավելի քան 90 ճյուղերը։ Ընկերությունների ակ-
ցիաների 51%-ը պատկանում և յաղոնական պետության և
490/₀-ը յապոնական մոնոպոլիստական կապիտալին (Միջուկ
և Մեցուրիսի կոնցերններին)։

²⁾ Դեմպինդ— «դեն պցելու ապրանք»— արդյունաբերության
արտադրանք, վոր արտասահմանյան շուկաներում վաճառվում և
հաճախ ինքնարժեքից պակաս գներով։ Առևտրական դեմպինդի
հիմնական նպատակն է շուկաներից վատարել ուսար ապրանքները,
որանց հանդեպ գրավել մոնոպոլ դրություն և ապա սեփական
ապրանքը վաճառել բարձր գներով։

բանվորի աշխատավարձն այնքան չնչին է, վոր բանվորը կարողանում է միայն պահել իր գոյությունը, — չմեռնել սովոր: Այն ժամանակ, յերբ յապոնական վորակյալ մանածագործը (կապիտալիզմի կողմէց նույնպես դաժանորեն շահագործվող պրոֆեսիա), որական աշխատելով 8 ժամ, ամսական ստանում և 30 դոլար, նույն կվալիֆիկացիայի չինական բանվորը, որական աշխատելով 10-ից մինչև 12 ժամ, ամսական ստանում և միայն 9 դոլար:

Արհմիություն ստեղծելը համարվում է պետական դաշտանություն և ըստ այնմ հալածվում է: Զեւնարկություններում և ընակելի բարակներում բանվորներին արգելված է խմբվել ալելվի քան յերկու հոգի: Այն բանվորները, վորոնք նկատվում են այդպիսի «հանցագործություն» կատարելիս, անհապաղ արձակվում են իրեւ «անհուսալի տարր»:

Արդյունաբերական բանվորներն այսուղ առհասարակ բնորովին զրկված են ազատ շարժվելուց: Նրանց ստիպում են ապրել հատկապես կառուցված և ցանկապատճած բարակներում, վոստիկանության մշտական վերահսկողության տակ: Բանվորները ձեռնարկությունից կամ բնակավայրից կարող են հեռանալ միայն իշխանությունների հատուկ թույլտվությամբ:

Մանջուրիայում մանուկների աշխատանքը սովորական յերեխություն: Նրանց ստիպում են ամեն որ 14 ժամ անցկացնել գործարանային հակասանիտարական շնչերում:

Ել ավելի մեծ շահագործման են յենթարկվում կանայք: Չինացի բանվորուհին յապոնական ալպահ հսկիչների հեշտությամբ ձեռք բերվող վորսն ու անպաշտպան զուը: Այդ ըստ կիչները, մինելով լիակատար տերեր, կարող են իրենց ուղածի պես մնչել իրավագուրի, իրենցից կախված կնոջը, մինչև իսկ տանջել և բռնություն գործադրել:

Ահա իրականում «Չինաստանում յապոնական միստիայի» վապահ ու լեզալ ֆոնը, ահա յապոնական իմպերիալիզմի «կուլտուր-տրեգերների» բարբարոսական դաղութային տիրակալության գաղշելի սկանկերը: Անամոթ կամայականություն, անսահման շահագործում, դաղութային բացարձակ կողոպտու, — ահա ասիական ծովափում Յապոնիայի «տնտեսական» և «քառարակական» գործունեյության ճշմարիտ և սպառիչ բնու-

թաղիք: «Ժողովուրդների բանու»— ահա «Մանչժու-Գո անգությունության» անվան ճիշտ թարգմանությունը:

Բննմիթ ՅՈՒՆԵՐԻ ՅԵՎ ԱԼԱՆ-ԹԱԼԱՆԻ ՌԵՖԻՄԸ

Հավանորեն Յեվրոպայում մինչև այժմ վոչ վոք չի լսել Աւչաներայի մասին:

Ուշանբառն մանջուրական Դիբին նահանդում մի փոքրիկ ալվան է, վոր գտնվում է բեյին գետի ափին, Ուշանյան շրջանում: Խոշոր քարտեզների վրա դժվարությամբ ե գտնվում այդ ավանը: Յեկա ահա դա մեր որերում չափաղանց հայտնի և չսփազանց տխուր հոչակ և ստացել:


Ավանում գտնվում է յերկար մի շենք, վորը մեծ հոգատարությամբ պահպանում են յապոնական ոկուպացիոն զորքերը, կարծես այն լինի ուղղական ամենաարժեքավոր մի որեկտ: Վայ այն չինացուն, վորը կհամարձակվի յերնալ այդ շենքի մոտ: Ժամապահներն իսկույն և յեթ կիրակին նրա վրա:

Ուշանբառյում յերկար ժամանակ այդ շենքի մասին գիտեցին միայն այն, վոր յապոնական բազմաթիվ բեռնատար ալսոմբիներ այսուեղ գիշերները խորհրդավոր կերպով ինչ-վոր բեռներ են թափում և ընդունում:

Յապոնական ժամապահների հոգատարությամբ պահպանված «աւագական որեկտ»՝ Ուշանբառյուի գաղտնիքը մի փոքր պարզվեց միայն 1934 թվի վերջում, յերբ հակայապոնական պարտիզանները հարձակվեցին ավանի վրա և խորհրդավոր շենքից մի քանի չինացիների հաջողվեց փախչել: Փախածների պատմածներից պարզվեց, վոր Ուշանբառյուի խորհրդավոր շենքը մի ընդարձակ զնդան է, ուր զարգուրելի դեպքեր են կատարվում:


Այնտեղ յապոնական ոկուպանտները «խունխուզների», այսինքն հակայապոնական արամաղություն ունեցող տարրերի անվան տակ մշտական բանտարկված պահում եյին մանջուրական 2000 քաղաքացիների: Գերիների արգելափակման առաջին շաբաթներում խիստ զարմանալի յեր այն, վոր նրանք բանտառմ որական յերեք անդամ ստանում եյին ճոխ սնունդ, — հորթի միս, խոզի տապակած միս, բրինձ, մակարոն: Ամայայն հետո,

Երբ կալանավորները բավականաշափ պարաբած ելին լինում դրա յեր հասնում սարսափելի զգաստացումը, — բանտավահնենքը սկսում ելին գիտական վորոշ մեթոդներով քամել նրանց արյունը... Յեվ կալանավորների հետ այդ զարհութելի ոլրոցներան կրկնվում եր յուրաքանչյուր վեց-յոթը որը մեկ անգամ, այնքան ժամանակ, մինչև վոր գժբախտ «դռներները» կմախքանում ելին: Հենց վոր կալանավորը բոլորովին ուժապատ եր լինում և այլևս պհտքական չեր արյուն ստանալու համար, նրան սպանում ելին: Սպանվածների տեղը բոնում ելին նոր բերված կալանավորները:



Նկար 7. Հարցաֆննությունից հետո: Քաղքանտարկելյալը յասպանմանը բական բանում:

Բեյզինի գրող Յզին Մին-դեն չինական մամուլում չրատաքակել և այդ զնդանից փախած կալանավորների պատմածը: Նրանք հաստատում ելին, վոր բանում «ամեն որ քամվում եր



Նկար 8. Գերի պարտիզանների հարցաֆննությունը Մանջուրիայում:

1000 Փունտ արյուն, վորը յապոնացիք հետո գործադրում եյին ինչ-վոր խորհրդավոր նպատակներով»:

Զինաստանի բոլոր լրագրերը լիքն են տեղեկություններով այն չլաված տանջանքների մասին, վորոնց յենթարկվում են Ման-ջուրիայի բնակչությունը յապոնական մտրակի տակ:

«1931 թվականը, Յապոնիայի կողմից Մանջուրիան ոկու-պացիայի յենթարկելու տարին, ճակատագրական դարձավ այդ յերկրի բնակիչների համար,— գրում են չինական բութուական «Դա-վանբառ» լրադիրը:— Մանջուրիան գյուղացիական յերկիր է: Այս պատճառով գյուղատնտեսության սիստեմատիկ քայլա-յումը նրան զարձրել է անսակելի տանջանքների թագավորու-թյուն... Յապոնական գորքերն անխնա վոչչայնում են ամբողջ գյուղեր: Նրանք այրում են վողորմելի խրճիթները և սրի յեն քաշում բնակիչներին: Նրանք տասնյակ հաղարակոր գյուղացի-ներին ստիպում են ռազմա-ստրատեղիական ճանապարհներ կա-ռուցել: Գյուղացիների ընտանիքներն այդպիսով կորցնում են իրենց միակ նեցուկներին... Մենք անկարող ենք նկարագրել այն զարկուրելի տառապանքները, վոր կրում են Մանջուրիայի բնակչությունը: Զիան բառեր, վորոնցով արտահայտվելի մեր հյուսի-արեւելյան նահանդների 30 միլիոնանոց ժողովրդի ան-կումը»:

Այն, ինչ վոր արվում են Ռւչանբառում, մեկ բանսում, չիմա այլ մասշտաբներով տեղի յե ունենում ամբողջ Մանջու-րիայում և Հյուսիային Զինաստանի մի մասում: Այստեղ յա-պոնական իմակերիալիստները սիստեմատիկորեն քամում են մի ամբողջ ժողովրդի արյունը և բոլոր կենսական հյութերը: Զի-նական տերիտորիայում ամենուրեք, ուր թափանցում են «ծա-գող արեւի» դրոշակը, այստեղ հաստատվում են վորակեա կողո-պուտի և ավագակության սիմվոլ, հանդիսանալով աներեսակա-յելի շահագործման ու ճնշման, ամբողջ ըրջանների անխնա քայ-լայման, այդ յերկրի բնակիչների գաղանային դատաստանի սինոնիմ: Ռւչանբառի բանտը, դա չինական նահանդներում յապոնական իմակերիալիզմի տիրակալության նախատիպն ե, վորը Զինաստանի և Ասիայի բոլոր ժողովուրդներին պարզ ցույց ե տվել, թե ինչ ե ոպասում նրանց, յեր ամբողջովին իրացվի Տանակայի տիրահռչակ հուշագրի հիմնական լոգուն-

դը, — «Աշխարհը նվաճելու համար մենք պետք են նախ նվաճենք Զինաստանը»:

«ՍԱՐՍԱՓԻ ՅԵԿ, ԱՐՑՈՒԽԹԻ ՀՈՎԻՑԸ»

Տոկիոյի պաշտոնական պրոպագանդիստների լեզվով Յապո-նիայի դրաված չինական ըրջանները կոչվում են «Յերջանկու-թյան հովիտներ»: Իսկ նրանց տանջած բնակչությունն այդ շրջաններն անվանում են «Մարսափի և արցունքի հովիտներ»:

Ահա յապոնացիների բոնագրաված քաղաքներում կենցաղի մի սովորական, առորյա պատկեր, — շուկայի հրապարակում յերթական տարագ հագած յապոնական սպան ծանը մտրակով ծեծում և գետնին ընկած չինացուն: Ծեծվողը ծեռներով գլուխը ծածկելով, լուռ գալարվում է փոշու մեջ, — նա նույնիսկ վա-խինում է ճչալ: Շրջապատողները ցրվում են մոայլ հայացքնե-րով:

Այստեղ վոչ չի կարող միջամտել, պաշտպանել ուժ-բախտին, վորովհետև այդ գեպքում յերկուսի բանն ել բուրդ ե: — անմիջապես կանչվում ե զինվորական պարեկը, միջամտո-ղին բռնում ու քարշ են տալիս զինվորական բանտ, իսկ այն-տեղ — զանակոծություն, խոշտանդումներ, տանջալից մահ... Զե՞ վոր նա, ով կհամարձակի խառնվել յապոնական կայսերա-կան սպայի և «չինական կրիայի» գործին, անկասկած կարմիր ե, խոռվար, բանդիտ, վոր արժանի յե մահվահ:

Դա յապոնական կրնկի տակ տառապող բոլոր քաղաք-ների և գյուղերի առորյան ե, վոր այդպես ե ամենուրեք, ուր կվանտուցյան բանակին) գորամասերն ու կայազորները «յապո-նական վողի» յեն տարածում:

Խերեյ նահանգից և այլ վայրերից չինական թերթերին ու-դարկված նամակները լիքն են այն տանջանքների պարսափելի մանրամասնություններով, վոր բնակչությունը կրում է յապո-նական սկուլպանաների ձեռքից: Զե՞ վոր յապոնական զինվորա-

1) Յապոնական ոկուպացիոն բանակ Մանջուրիայում:

կանությունից բացի, տեղական յապոնական ուղիղենաներն¹⁾ և կատարում են բոլորովին ապօրինի գանձումներ և բռնություններ չինացիների դեմ։ Յազոնացու հենց մի խոսքով վուալիկանությունը բռնում և նրան անհաճելի առևտրականին, արհեստավորին, աստիճանավորին, բանվորին, ծուռը նայող անցորդին և պահում այնքան, մինչև վոր աղբականները վուալիկանությանը կամ «նեղացած» ուղիղենատին չվճարեն Համապատասխան փրկանքը։ Հաճախ բռնվածների աղբականները վուալիկանությունից նույնիսկ ստանում են Հատուկ ծանուց այն մասին, թե մեղավորին կտանջեն կամ բանտում սովորենթարկեն, յեթե նրա համար փրկանք չմուծվի։

«Յեթե դու մանը հողային սեփականատեր ես կամ ֆերմեր, — ապված և Հյուսիսից ստացվող նամակներից մեկում, — և մի քիչ փող ունես, ապա յապոնական ավաղակները դրանք խլում են քեզանից։ Նրանք քո մասին լուր են տալիս յապոնական հյուսպատության, թե դու «իրավունք խախտող» ես կամ «պարտիզանների ղեկավար»։ Յապոնական զինվորները կդան քո տունը և կդրավին քո ամբողջ կարողությունը։ Քո տանից նրանք կտանեն բոլոր տղաժարդկանց։ Վոչ միայն քո գուրեքը, այլև քո ամբողջ կյանքը կախված է նրանց կամայականությունից։

Մանջուրիայում յապոնական բռնությունների ցուցակը կարող և անվերջ լինել։ Բերենք միայն վերջին ժամանակներիս ամենաթնորոշ գեղագերը։

Յապոնացիները «ստրատեգիական» նկատառումներով Խարբինի յերկաթուղարծի յերկարությամբ, ՍույՓին գետի մոտ, 30 լի²⁾) հողամասի վրա սկսեցին այրել բոլոր բնակելի տները։ Զժուխտ գյուղը պատահմամբ փրկվեց կրակից։ Դրա համար վորպես պատիժ, ոկուպանտները հրապարակ քշեցին գյուղի բնակիչներին (ավելի քան 1000 հոգի)։ և բոլորին սրի քաշեցին։ Մինդանի շրջանի գյուղերից մեկում յապոնական մի լեյտե-

¹⁾ Ոտարերկրյա հպատակներ, վորսնք մշտապես աղբում են Չինաստանում և այնուել ողբավում են ոտարերկրացիների ստանձինությունից։

²⁾ Մեկ լին—644,4 քառ. մետր։


նոնա վորոշեց «կուլտուրական աշխատանք» կատարել։ Չնայելով ամենազաժամ սառնամանիքին, զինվորները գյուղի ամբողջ բնակչությունը, — այդ թվում նաև ծերերին, կանանց ու յերեխաներին, — հավաքեցին բացովյա «միտինդի»։ «Փողովի» մասնակիցներին ստիպեցին ծնկաչոք լոել լեյտենանսի ճառը։ Յերբ ցրտից կծկվող յերեխաները սկսւմ եյին լաց լինել ու ձաւլ, կատաղած լեյտենանտը վերցնում եր նրանց և ուժեղ թափով շպրտում դետին։ Յերեխաներից մի քանիսը տեղն ու տեղը մեռնում եյին։

Սրեւլյան-Չինական յերկաթուղու մի կայարանից վոչ հեռու յապոնական մի զորամաս անտառում շրջապատեց 71 փայտահատի և բոլորին գնդակահարեց գնդացիրներով։

1936 թվականի հունիսին Բեյիսե գետից (Աերեյ նահանգ) Հանլեց 600 դիակ, — պարզվեց, վոր գրանք չինական բանվորներ են։ Հետաքննությունը ցույց տվեց, վոր յապոնական ոկուպանտներն այդ մարդկանց ստիպում եյին աշխատել ու պազմական ամրությունների շինարարության վրա և ապա, վորակեսզի վոչ վոք լուր չհաղորդեր այդ ամրությունների մասին, չինարարության վրա աշխատող բոլոր չինացիները դադանարար սպանվում եյին, իսկ նրանց դիակները նետվում եյին Բեյիսե գետը։

Հոկայական և չինացի այն աղջիկների ու կանանց թիվը, վորոնք գարձել են ոկուպանտների բարբարոսական բռնության դոհեր։ Յերբ պատժիչ զորամասերը ներխուժում են այն գյուղերը, վորտեղից հեռացել են պարտիզանական ջոկատները, գուշանացած ոկուպանտները չեն խնայում վոչ մի կնոջ։ Յեթե կանայք փորձում են բռնարարողներին դիմադրություն ցույց տալ, վերջիններս ամբիններով խոցում են նրանց։ Շատ տեղերում բռնությունից չեն աղատվել նույնիսկ Հղի կանայք։ Հաճախ զինվորները բռնարարված կանանց ծնկաչոք շարք են կանգնեցնում, գլուխները ծածկում են թաշկինակներով և գնդակահարությունը գնդացիրներով։

Լայնողեն զործադրելով կրակը և յերկաթը, սվինները և մարակը, XX դարի յապոնական բռնադրավիչները չինական խաղաղ տերիտորիաներում իրենց գամեանությամբ գերազանցեցին այն ժամանակների գաղութային ալան-թալանի ամե-



նամուայլ որինակները, յերբ խապահացիները նվաճում եյին Պերուն և Մեկսիկան, յելքուպական տուտրական և ծովահենային բանդաները ստրկացնում եյին Հնդկաստանի, Աֆրիկայի և Ամերիկայի ծովակիները XVI և XVII դարերում: Զինաստանի նահանգներում յապոնական ոկուպանտների անցած ճանապարհն արտավորված և այլոված գյուղերով, ավերված քաղաքներով: Մանջուրական քաղաքների և գյուղերի բոլոր ցանկապատերի վրա և փողոցահատներում կախված են յապոնական տիրապետության սիմվոլները, — Զինաստանի լավագույն վորդիների և գուստերի արյունաշաղախ, կտրված զլուխները, այն մարդկանց գլուխները, վորոնք համարձակվել եյին ապստամբել ու տարերկյա հարձակման դեմ:

Մանջուրիան ավելի քան վեց տարի անքում և յապոնական միլիոնարիստների յերկաթե կրօւնկի տակ: Յապոնական պրոպագանդայի պաշտոնական բյուրոները բազմաթիվ անդամ հաղորդում եյին, թե «յերկրում խաղաղություն է հաստատված»: Սակայն անթիվ ու անհամար փաստերը ցույց են տալիս, վոր

անընդհատ ու ահարկու թափով աճում և ժողովրդական մասսաների ցասումն ու դիմադրությունը յապոնական ստրկացնողներին: Այսպես, միայն 1936 թվի հունվարից մինչև հունիսը յապոնացիների գրաված շրջաններում «հակայապոնական տրամադրությունների համար» սպանված և 24442 հոգի, խեղդված և ավելի քան 15600 և բանտարկված և 10000 հոգի: Առանց վորեւ իսրության տեղի յեն ունենում մասսայական ձերբակալություններ: Տեսորը միատեսակ դաժանությամբ ուղղված և բնակչության բոլոր դասակարգերի ու խմբերի դեմ, — թե չինական աղքատ բանվորների ու գյուղացիների և թե ականավոր հասարակական և քաղաքական դործիչների, պրոֆեսորների, վաճառականների ու աստիճանավորների դեմ, վորոնք կառկածվում են հայրենասիրական զգացմունքների համար: 1936 թվի հունիսի 25-ին Գունիսէ շրջանում, Գերբինի և Խելունցզյանի սահմանում միմիայն մեկ որվա ընթացքում ձերբակալվեցին՝ տեղական առեւտրական պալատի նախադահը, շրջանային դատավորը և 25 աստիճանավորներ, վորոնք բոլորն ել մեղադրվում եյին «հակայապոնական վոգու և տրամադրության համար»:

Մանջուրիայի բանտերն այնքան լեի-լեցուն են, վոր վերջին տարում յապոնացիք ստիպված եյին շտագ կառուցել (Զանչունում, Մուկդեհում և Խարբինում) յերեք նոր, խիստ ընդարձակ բանտեր, վորոնց շինարարությունը նստեց կես միլիոն իյեն:

Սոսկալի յե յապոնական բանտի կարանավորների վիճակը: Այսակազմ նրանց ամիսներով յենթարկում են խոշտանգումների և գանակոծության, տպա կենդանի թաղում են: Որինակ, Խարբինում կալանավորներին գլխիվայր դցում են բանտի մոռայեղած փոսր և ծածկում են հողով, մարմնի ստորին մասը դուրս են թողնում, վորսկեսղի այն պատառուեն թափառական չերը:

Մանջուրիայի «խաղաղացման» աստիճանը լավ պատկերվում է յապոնական ոկուպանտների մի շարք հրամաններով, վորոնք հրատարակված են 1936 թվի վերջում: Այսպես, սեպտեմբերին հատուկ հրամանով արգելվել եր ամեն մի տեսակի հարթերություն առանձին գյուղերի միջեւ: Այդ ժամանակից

ակսած՝ բնակիչներից վոչ վոք իրավունք չունի հեռանալ իր գյուղից առանց գյուղական տանուտերին առընթեր յապոնական «խորհրդականի», այսինքն յապոնական վոստիկանական չինովնիկի թույլտվության: Նույն ամսում հրապարակվել եր մի համան, վորը յերկրի բոլոր բնակիչներին պարտավորեցնում եր վոստիկանությանը հանձնել բոլոր տեսակի զենքերը, ինչպես նաև բոլոր «վտանգավոր դործիքները»: «Վտանգավոր դործիքներ» ելին համարվում նույնիսկ խոհանոցային դանակները: Թույլտրվում եր այնուհետև յերեք ընտանիքի համար ունենալ այդպիսի մի դանակ: Սեպտեմբերյան հրամանի համաձայն, ամեն մի բնակիչ, վորը «կրոնվի արգելված զենք պահելիս, յենթակա յե տեղն ու տեղը դնդակահարման»:

Բնակչությանը վերջնականապես տեսորի յենթարկելու համար կատարվեց բնակչության ընդհանուր ցուցակագրություն և կազմվեցին յուրաքանչյուր վայրի բնակիչների մանրամասն ցուցակները: Յեթե շուրջկալների ժամանակ, վորոնք դրեթե ամենորյա յեն, յապոնացիք տվյալ գյուղում կամ քաղաքում բռնում են ցուցակագրված մարդ, նրան առանց վորեւե քննության մահապատճի յեն յենթարկում վորպես բանդիտի: Այն դեպքում, յերբ վորեւե մեկը պահապում ե բնակիչների ցուցակից, ոկուգանաները դժուում են, վոր նա մտել ե հակայապոնական ջոկատները, և կորած մարդու ամբողջ ընտանիքն ու այսպես կոչված՝ «յերաշխավորողների կոլեկտիվն» անհապաղ ձերբակալվում են:

Կոլեկտիվ, փոխադարձ (յերաշխավորության (բարցղիա) սիստեմը մտցված ե ամբողջ յերկրում: Այդ սիստեմի համաձայն, գյուղի ամբողջ բնակչությունը բաժանվում ե խմբակների, վորոնց գլուխ են կանգնած վոստիկանության նշանակած անձինք: Ցղյան, — ամենափոքր թիջը, — բաղկացած ե տասը ընտանիքից, նրան գլխավորում ե շրջանային կամ ոկրուղային վոստիկանական վարչության նշանակած ցղյաշանը: Տասը ցղյան կազմում են բառ, բառչանի գլխավորությամբ:

Այդպիսի սիստեմի գոյությունը բնակչությանը բոլորովին զըրկում է տեղափոխվելու աղատությունից, և դրա հենց միակ նպատակն է դժվարացնել կապը առանձին գյուղերի բնակիչների միջև, վոչնչացնել կապը հակայապոնական մարտիկների հետ,

արդեւ տեղական բնակիչների մուտքը պարտիզանների ջոկատները:

Սակայն նույնիսկ այդ չափազանց գաժան մերկապարանոց տեսորով պաշտպանված վոստիկանական սիստեմը չի կարող կասեցնել լայն մասսաների աճող կամքը—հակահարված տալու բռնադրավիշներին, չի կարող խանգարել զանազան հակայապոնական պարտիզանական և կամավոր ջոկատների աճը և միավորումն իրոք պաշտպանության մի հղոր, միասնական հակայապոնական հյուսիս-արևելյան բանակ:




ԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՅԱՊՈՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ԾՆՈՒՆԴԸ

«ԶՔԱՎՈՐՆԵՐ, ՄԻ ԿՐԱԿԵՔ ԶԵՐ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՎՐԱ»

«Կորչի՛ յապոնական իմպերիալիզմը», «Զինաստանից վռնդել յապոնական ավաղակներին», «Հանուն ազատության և դեմոկրատիայի», «Հանուն բոլոր քաղաքական բանտարկյալների ազատության», «Կորչեն հայրենիքի դավաճանները», «Հանուն չինական ժողովրդի միասնական ազգային հսկայապոնական ճակատի», —ահա լողունգներ, վորոնք այժմ դարձել են չինական ժողովրդի հսկայական մեծամասնության մարտական նշանաբանը: Հեղափոխական բանվորներն ու գյուղացիներն առաջինն եյին, վոր այդ լողունգները դրեցին իրենց դրոշակների վրա: Նրանց միացան Զինաստանի ուսանողների և ինակիզենցիայի մեծ մասը: Հանուն այդ լողունգների սկսում են հանդես դալ աստիճանավորները, արդյունաբերողներն ու վաճառականները, լրագրողներն ու փաստաբանները, գոմինդանական բազմաթիվ բանակների զինվորներն ու սպաները: Նույնիսկ Գոմինդանի մի քանի առաջնորդները, սկզբում վախվիսելով, իսկ այժմ ավելի վճռականորեն ու բարձրաձայն իրենցն են հայտարարում այդ լողունգները:

Մանջուրիայի տխուր բախտը, Յապոնիայի ուազմական լիոնի սողոսկումը Հյուսիսային Զինաստան և չինական պետության հետագա անդամահատման բացահայտ նախապատրաստությունը բոլոր ազնիվ հայրենասներին պարզ ցույց տվին, թե առաջիկայում ինչ և սպասում իրենց, ինչպիսի հսկայական վասնե և սպառնում յերկըին: Կոմունիստական կուսակցության, չինական խորհրդային կառավարության և չինական կարմիր բանակի չե-



Նկար 11. Պատճիչ արշավախումք:

դավովսական-ռազմական խորհրդի խոռքն ու գործը նրանց ցուց
եյին տալիս հայրենիքի և ազգի փրկության ուղիներն ու միջոց-
ները: Յեվ ահա 1935 թվի Հոկտեմբերից սկսած մենք ականատես
ենք հակայապոնական հզոր, չդադարող ցույցերին ու յելությ-
ներին, վորոնց ժամանակ հարյուրավոր հայրենամերներ անձ-
նվիրաբար իրենց կյանքն են տալիս հանուն ազատության:

Հակայապոնական ժողովրդական բանակի ազատագրական
համառ պայքարը Մանջուրիայում, առանձին ջոկատների պայ-
քարը Զախարում և Ժեմեյում, բոնազրավիչների հարձակում-
ների դեմ, Խերեյում 30 հազար գյուղացիների հոյակալ ազըս-
տամբությունը, Շանհայի վեց շաբաթվա փառապանծ պաշտպա-
նությունը բանվորների ու 19-րդ բանակի դինվորների ուժերով,
ընթացիկ տարում Սույունի հաղթական պաշտպանությունը,
անցյալ տարի Շանհայում և Ցինդապյում յապոնական տեքստիլ
դործարանների բանվորների ընդհանուր գործադուլը, հակայա-
պոնական խոշոր ապստամբությունը Զախարում, ինքնապաշտ-
պանության հակայապոնական բանակների ստեղծումը և 1937
թվի ընթացիկ դեպքերը, —այս բոլոր փաստերը ցույց տվին չե-
առաջ և մինչև վերջ պաշտպանել իր յերկրի ամբողջականու-
թյունն ու անկախությունը:

Գոմինդանի հին թեզը, —«Նախ ներքին անդորրություն (այ-
սինքն կոմունիստների և չինական կարմիր բանակի վոչնչացում
վ. Ս.), իսկ հետո դիմադրություն արտաքին աղբեկորին»—
պատճության ընթացքով վաղուց սեղանի տակ և նետված: Մի
շաբք հետազա դեպքեր խոսում են այս մասին, վոր գոմինդա-
նական հյուսիս-արևելյան 17-րդ բանակի դինվորները և հրա-
մանատարական կազմը, վոր Նանկինի կառավարության կողմից
ուղարկվել եյին վորպես պատժէչ կորպուս, վոչ միայն
չուզեցին կովել հակայապոնական ժողովրդական կարմիր բանա-
կի դեմ, այլև ձգտում եյին սվինները դարձնել յապոնական բրո-
նզավալիչների դեմ: Կարմիր բանակի ջոկատների հետ յեղած
հակատամարտերում վերջին շրջանում գոմինդանական բանակի
դինվորները կամ խուսափում եյին կովից, կամ թե ուղղակի անց-
նում եյին հակառակորդի կողմը:

Մի զինվոր (գեներալ Յան Խու-չանի բանակում 9 տարի ծա-

ռայած), վորին 1936 թվի վերջում գերի եյին վերցրել կարմիր
բանակի զորամասերը և ապա աղատ թողել, այսպիս և պատմում
կարմիրներին գերի ընկնելու հանդամանքները —

«Անցած աշնանը մեր բրիգադը շրջապատվեց կարմիր բանա-
կի զորամասերով, և նրանք լոգունդներ եր, վոր կարկուտի պետ
թափում եյին մեր վրա, որինակ, —«Հանձնեք զենքերը», «Զքա-
վորները չպիտի կրակեն նույնպիսի չքավորների վրա»: Մենք,
իհարկե, պատրաստ եյինք զենքերը հանձնելու, սակայն հրամա-
նատարները մեզ ստիպեցին դիմադրություն ցույց տալ կարմիր-
ներին: Այն ժամանակ մենք սկսեցինք կրակել ողի մեջ: Մի ժա-
մից հետո գերի ընկանք կարմիր բանակին» («Զայնա տու-դեյ»,
1937 թ. հունվար):


1936 թվականի մայիսին Շանսի նահանգում կարմիր բանակի դեմ
ուղղված գործողությունները դեկավարում եր դեներալ Են Սի-
շանը: Նրա շտաբ-կայանի հաղորդագրությունների համաձայն,
կոիվների առաջին խոկ որերում գոտիներական դեներալ Վեն
Յու-ժենի ըրիգադը Լին-Փանի մոտ զինաթափվեց առանց կովի: Այնուհետև շտաբ-կայանը շուտով հաղորդեց, թե կարմիրների
զորամասերն առանց կովի զինաթափին են Յան Սյուո-առյի-
հրամանատարության տակ գտնվող յերկու զումարտակ: Մայի-
սի 5-ին Նանկինի կայազորի մի գունդ ապստամբվեց և անցակ
կարմիր բանակի կողմը¹⁾:

Գեներալ Են Սի-շանը սկսեց արշավը, ունենալով 70 հազար
զինվոր, խոկ կես ամսից հետո, թեսկետ նա այդ ամբողջ ժամա-
նակված ընթացքում չեր ունեցել վորեւ մեծ կոկվ, նրա հրամա-
նատարության տակ մնաց միայն 40000 զինվոր: Գեներալ Ենը
փորձում եր կարմիր բանակի դեմ հանել 24 «առանձնապես հու-
սալի» դնդեր, վորոնք բաղկացած եյին Շանսի նահանգի կուլակ-
ների տղաներից: Այդ փորձի արդյունքները նույնպես տիտուր
եյին: Շուտով հարկավոր յեղավ յերիտասարդության մի մասին

1) Զինական զորքերի մի մասի ապստամբությունը, վոր
ուղղված եր Նանկինի զինավոր զորահրամանատարության դեմ,
—1936 թվի դեկտեմբերին, յերբ գեներալ Զժան Սուե-լյանը—
խուսափեցին պարագլուխներից մեկը, —գերի վերցրեց Զան-
կայ-շիին:

ուղարկել տուն, վորովհետև նա ել արդեն միանդամայն բացահայտ կերպով հայտարարում եր, թե անհրաժեշտ է միասնական հակայալոնական ազգային ճակատ ստեղծել: Բացի դրանից, պարզվեց, վոր բազմաթիվ ունեոր գյուղացիներ, —ինչպես այդ ովկուրար լինում ե Զինաստանում, —փողով հավաքագրում ելին չքավորներին և իրենց տղաների փոխարեն ուղարկում հավաքակայանները:

Հետագայում ինքը, գեներալ են Սիշանը, Նանկինի կառավարության վրա ժողովրդական մասսաների գործադրած ձնշման հետևանքով ստիպված եր, իր զորքերի մեծ մասի գլուխն անցած, Սույուանում պայքարել յապոնական բռնադրապիշների դեմ:



Նկար 12. Զինական ուսանողները հակայապոնական ազիտ-արշավում, այն սլավատի առջև, վորը չին ժողովրդին կոչ ե անում պայքարել հայրենին անդամահատելու դեմ:

Իսկ չինական կարմիր բանակը, վոր վերջին ժամանակներս ստացել ե «ժողովրդական կարմիր բանակ» անունը, այսոր ավելի ուժեղ և միասնական ե, քան յերբեք: Լոնգոնի «Դեյլի Հերալդի» և «Նյու-Յորկ Սանի» թղթակից Եղիար Սնոուն կարմիր բանակի մասին գրում ե հետեւյալը:—

«Այն 7 տարվա ընթացքում, վոր յես ապրել եմ Զինաստանում, յես շատ բանակներ եմ տեսել: Սակայն նրանցից վոչ մեկում յեմ չեմ տեսել այդպիսի մարտական վողի, մարտիկների

քաղաքական և ընդհանուր դաստիարակության այդպիսի բարձր մակարդակ, այդպիսի հայրենասիրություն, այդպիսի բարձր բարոյական վիճակ»:

Զինական խորհուրդների նույնիսկ վոխերիմ թշնամին, գեներալ Մացումուրոն ստիպված ե մեր հիշատակած հուշագրում արձանագրել, վոր:

«Զինական կարմիր բանակը դարձել ե բացառիկորեն ուժեղ և մարտունակ: Դժվար ե գտնել ժամանակակից մի բանակ, վորն ունենա նրա հատկությունները: Կարմիրների իդեոլոգիան հանգիստանում ե մի հսկայական ձգողական ուժ մասսաների համար»:

Այդ իսկական ժողովրդական բանակը ճշտությամբ կենսագործում ե Զինական կենտրոնական խորհրդային կառավարության նախագահ Մատ Յզե-տունի հայտարարությունը, վոր նա արել եր «Ազգային փրկության համաշխական ասոցիացիային» ուղղած իր նամակում, 1936 թվականի ոգոստոսի 10-ին, —«Մենք չենք շոշափի կենտրոնական զորքերը և այլ ուղղմական միացումներն այն գեպօւմ, յեթե նրանք իրենք չհարձակվեն մեր վրա, յեթե նրանք չինական զորքերին հետ չպահեն Յապոնիայի դեմ պայքարելուց: Յեթե կենտրոնական զորքերը կամ այլ ուղղմական միացումները պայքարում են Յապոնիայի դեմ և չեն փորձում խանդարել ազգային մասսայական շարժման, ապա մենք բոլոր ուժերով կողնենք նրանց»:

ԱԶԴԱՅԻՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՐԸ

Այդպիսով քաղաքացիական պատերազմը փաստորեն դադարեց Զինաստանում և կասկածելի յե, վոր Գոմինդանի ղեկավարները փորձեն նորից սկսելու այն, ժողովրդական լայն մասսաների կտրականապես արտահայտված կամքին հակառակ: Յուրաքանչյուր չինացի հիմա լավ գիտի, վոր միայն չինական կոմկուսակցության կենտրոնական կոմիտեյի իմաստուն քաղաքականության չնորդիլ եր, վոր հաջողվեց խաղաղ ճանապարհով լուծել Սիյանի կոնֆլիկտը (Զան Կայ-շիի ձերբակալությունը), վոր չենց ինքնազոհ չինական կոմկուսակցությանն ե պատկանում, յապոնական ազրեսիայի դեմ պայքարելու համար ազդի բոլոր ուժերը միավորելու նախաձեռնությունը:

Զինական կոմկուսակցությունն առաջինն եր, վոր ժողովը՝ զին ցույց տվեց հայրենիքի փրկության, նրա անկախությունն ու անվտանգությունը պահպանելու ուղիները։ Նա տվեց անհամար ապացույցներ այն մասին, վոր սկատրաստ և վերացնել այն ամենն, ինչ վոր խանդարում և ազդային պաշտպանության համաշխական կառուվարություն կազմելուն։ Գոմինդանի փետրվարյան (1937թ.) պլենումին ուղղված իր դիմումի մեջ չինական կոմկուսակցությունը հայտարարեց, թե պատրաստ և դադարեցնել պայքարը, վոր մզում եր գոմինդանական կառուվարությունը տալալելու համար, և նույնիսկ խորհրդային ըրջաններն ու կարմիր բանակը յենթարկել Զինաստանի միացյալ դեմոկրատական կառավարության, — այն գեպքում, յեթե ընդունվեն կոմկուսակցության առաջարկները յերկրի բոլոր ուժերը միավորելու մասին, — պղը փրկելու համար։ Այդ գիտեն չինական ժողովրդի միլիոնները և այդ մասին իրենց հաշիվ են տալիս Գոմինդանի ներսում յեղած բոլոր ազնիվ հայրենասերները։

Սուն Յզին-լենը, չինական ժողովրդի մեծ առաջնորդ Սուն Յաթ-սենի այրին, ուազմական խորհրդի նախարարի տեղակալ ֆին Յու-սյանը, որենսդրական պալատի նախագահ Սուն Ռոն և մի շաբաթ ուրիշ պետական խոշոր գործիչներ Գոմինդանի փետրվարյան պլենումին ուղղված իրենց դիմումով պահանջեցին վերադառնալ Սուն Յաթ-սենի յերեք սկզբունքներին, — բարեկամություն ԽՍՀՄ հետ, զինակցություն կոմունիստների հետ և բանվորների ու գյուղացիների շահերի պաշտպանություն։ Այդ դիմումի մեջ արտացոլվեց Գոմինդանի ներսում ավելի և ավելի ամրապնդվող այն խմբավորման կարծիքը, վորը գիտակցում եւ, վոր յեթե Գոմինդանը չ'արձադանդի մասսաների պահանջներին և վտանդի կենթարկվի վոչ միայն այդ կուսակցության, այլ և ամբողջ պղի բախտը։

Իեւալ իրականությունն ավելի ուժեղ է, քան գոմինդանական պլենումների բանաձևերը և քաղաքական ինտերիզները։ Դաժան, անխուսափելի փաստերն այժմ սովորաբար վախկուտ ու անլճուական չինական բուրժուազիյին ստիլում են մտնել միամնական հակայապնական ճակատի շարքերը, հետեւով ինքնապաշտպանության բնադրին։

Յերջին տարիներս Զինաստանի եկոնոմիկան, — վոչ առանց

Անդլիայի ու ԱՄՆ շահախնդիր «ոգնության» — յենթարկվեց մի քանի փոխուսությունների ։ Կատարված են բանկային և ֆինանսական ռեֆորմներ, աղդայնացված են արծաթի պաշարները։ Նանկինի կառավարությունն ուստարեկըյա կապիտալի զգալի ողնությամբ կառուցեց ստրատեգիական և անտեսական տեսակետից կարևոր յերկաթուղիներ և մի շաբաթ նահանգներում զգալի թվով խճուղիներ։ Անկասկած ե, վոր գա նպաստեց յերկրի վարչական կառավարման ավելի մեծ կենտրոնացման և ուժեղացման։

Յերկրի բոլոր հակայապնական տարրերը պահանջում են կենտրոնական ուժեղ կառավարություն, վորը կարողանա ջախջախիչ, զինված գիմագրություն ցույց տալ յապոնական աղբեսիացին։ Զինական ժողովուրդն արթնացել ե և պայքարի յե յենում, Զինապտանը միավորվում ե։ Այս շաբաթումը չեն կարող կանոնեցնել Գոմինդանում Յամբավորումների վոր և ինտերիզները։

Բոնության ու տեռորի մերկապարանոց խրախճանքը, բնակչության կողոպուտն ու տանջանքները յապոնացիների գրաված շուրջաններում, թեյզինի և Տյանցցինի բանագլաւավումը, 1937 թվականին Յապոնիայինոր, լկտիներիսութումը, Հյուսիսային Զինաստանի նահանգները և արյունու սպանդները, վոր յապոնացիք սարքում են Շանհայում և Զինաստանի այլ խաղաղ քաղաքներում, — այս բոլոր նախագուշացում և մարտահրավեր և չինական ամբողջ ժողովրդին։ Յապոնական իմպերիալիզմի անկուշագրեսիան բոլորի առաջ գնում և մի մռայլ գիլեմմա, — չինական ապդի լինելու թե չինելու մասին։ Միանական ազգային հակայապնական ճակատի իրականացման համար Մանջուրիայում մըլքող պայքարի մեթոդները, վոր կիրառվում են չինական կոմկուսակցության նախաձեռնությամբ, չինական ժողովրդին ցույց են տալիս ազգի փրկության միակ ուղին։

ՄԱՆՁՈՒՐԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈՑԵՐՈՒՄ

Մանջուրիայի բռնագլրավման հիմքերորդ տարեդարձին հրապարակված յապոնական պաշտոնական հաշվետվությունը մատնանշում ե, վոր հակայապնական ջոկատների հետ յեղած ընդհարումներում սպանված ու վիրավորված են մինչև 140000 յապո-

նական ու յապոն-մանջուրական դինվոր։ Այդ թիւն անշուշտ լրիվ չե։

Չինական բուրժուական «Գուանչժոու մինդո ժիրառ» թերթը 1936 թվի հոկտեմբերի 5-ի համարում հաղորդում է, վոր միմի-այն հուլիսին յապոն-մանջուրական զորքների և պարտիզանական ջոկատների միջև տեղի յե ունեցել 1371 ճակատամարտ։ Այդ կոիվներին յապոնացիների կողմից մասնակցել է 62875 դինվոր, իսկ հակայապոնական մարտիկների կողմից—ավելի քան 202500։ Նույն թերթի տեղեկությունների համաձայն, միայն հուլիսին յեղած ընդհարումներում պարտիզանների կողմից սպանվել է 277 հոգի, իսկ յապոնացիների կողմից սպանվել է 666 և վիրավորվել 265 հոգի։ Դա վկայում է պարտիզանական ջոկատների աճող մարտական զորությունը և ակտիվությունը։



Մանջուրիայում վատ զինված հակայապոնական զորամասերը գեմ առ դեմ կանգնած են տեխնիկայի վերջին խոսքով զինված, բաղմաթիվ տանկերով, զբահապատ ավտոներով, զրահագնացք-

ներով ու ինքնաթիւներով ապահովված կանոնավոր բանակի առաջ։ Պարտիզաններն իրենց զենքերը լրացնում են մեծ մասամբ ի հաշիվ թշնամու, —այն, ինչ վոր ժամանակակից զենքերից ոլտկասում է նրանց, լրացնում են անսահման նվիրվածությամբ ազգային պատավարության գործին, քաջությամբ ու խանդավառությամբ, բնակչության հետ սերտ կապով։

Նույնիսկ յապոնական աղբյուրների համաձայն, պարտիզաններին զենք և զինասարք մատակարարելու հիմնական աղբյուրը հանդիսանում է Անչժոու-Գոյի բանակը։ Հաճախակի յեն դաւնում այն գեղքերը, յերբ մանջուրական ջոկատները «կոիվ են գնում», վորպեսի զենքերով հանդերձ անհապաղ անձնատուր լինեն հակառակորդին։

Հակայապոնական ջոկատների տակտիկան, —յերեան գալ և հարձակվել այնտեղ, ուր նրանց ամենից քիչ են սպասում, —նորանոր հաջողություններ և բերում նրանց։ Իր իսկակես վոր հերոսական սխրագործություններով առանձնապես հռչակվեց դիմիդիայի կին-հրամանատար Լի Խուն-զուանը։ 1936 թվի ապրիլի 10-ին այդ ժողովուրական հերոսուհին 2000 մարտիկների գլուխն անցած, 20 ժամվա ճակատամարտից հետո ներխուժեց Դունսին կոչված շրջանային քաղաքը և գրալից 10 թնդանոթ։ Ապրիլի 11-ին նրա ջոկատը գրոհ տալով վերցրեց Գյուցդինչեն քաղաքը։ Սյնտեղ կայազորի մեծ մասը կազմում էին մանջուրական զորամասերը, և պարտիզանները քաղաք խուժեցին, աղաղակելով, —«Զինացիներ, մի կրակեք ձեր յելբայրների վրա»։ Ի պատասխան այդ կոչի Մանչժոու-Գոյի կայազորի մի բրիգադ արեց իր յապոնացի հրամանատարների դատաստանը և անցավ պարտիզանների կողմը։ Ապրիլի 23-ին Լիի նույն մարտական ջոկատը Բաստոնդեյում գրավեց Մանչժոու-Գոյի բանակի մատակարարման բաժինը և ձեռք բերեց մեծ քանակությամբ զինասարք ու պարեն։ Ապրիլի վերջում Լի Խուն-զուանի ջոկատում արդեն կար ավելի քան 5000 մարտիկ։

Պարտիզանական ջոկատներն իրենց լարված աշխատանքը կատարում են հակայական զրկանքներ կրելով։ Նրանք հարկադրված են շաբաթներով առանց սնունդի, հագուստի և ոթեանի թաղնվել լիներում։ 1935-36 թ. թ. ձմռանը յապոնական մի պատիկ զորամասի հաջողվեց շրջապատել մի խոշոր պարտիզանական ջորոտմասի հաջողվեց շրջապատել մի խոշոր պարտիզանական ջո-

կատ: Յապոնացիք կես ամսվա ընթացքում պաշարեցին այդ ամբողջ վայրը: Այդ ամբողջ ժամանակ պարտիզանները յևնթական դաժան քաղցին, —սննդի միակ միջոցն ընկած ձիերի միաներ:

Պարտիզանները վոչ պակաս ծանր տառապում են մանջուրական դաժան ձմեռվա ցրտերից: Մարտիկների մեծ մասն ունի միայն ամառային թեթև հագուստ և նրանք ստիլված են տաքանալու համար հերթով փաթաթվել ընկած ձիերի մորթիներով: Զյան մրբիկների ժամանակ տեղափոխվելիս նրանք քնում են ձյունով ծածկված գետնի վրա, վորովհետեւ շրջակայքում յապոնացիներն այրել են բոլոր բնակելի տները: Յեվ այսուամենայնիվ պարտիզաններն ողակ առ ողակ ճեղքում են թշնամու զդթաները:

Արդեն հիշատակված միացյալ հակայապոնական հյուսիս-արևելյան բանակի մեջ մտնում են բանակային յոթը կորպուսներ: Կորպուսների յերեք հրամանատարները կոմունիստական կուռակցության անդամներ են: Բանակի բարձրագույն հրամանատարության շատ պաշտոնյաներ Գոմինդանի նախկին սպաներ են: Զինական կոմկուսակցության ազգեցությամբ բանակում ես ամրանում և միասնական հակայապոնական ժողովրդական ճակատի գաղափարը:

Զափազանց հետաքրքրական ե լի Յան-լեյի հրամանատարության տակ գտնվող բանակային 4-րդ կորպուսի կազմը: Կորպուսի մարտիկների 38%-ը Մանջուրիայից են, 22%-ը Շանդուն նահանգից և մոտ 17%-ը — Ժեխեյից, Հենանից և Խերեյից: 13%-ը ծագում են Սիչուանից, Խունանից, Խուբեյից և Անխեյից: Բանակային 4-րդ կորպուսի անձնակազմի մոտ 10%-ը տալիս են կորեացիները:

Իր սոցիալական կազմով այդ կորպուսը ներկայացնում է հետևյալը: — 37%-ը — չյուղացիներ, 23%-ը — բանվորներ, 10%-ը — վաճառականներ և ջենտրիններ, 10%-ը ուսանողներ և ուսուցիչներ. մարտիկների միայն 20%-ը բանակում ծառայել և մինչև Մանջուրիայի բանագրավումը: Բանակի մնացած մասերի և կորպուսների կազմը նման է 4-րդ կորպուսի կազմին:

Այդ և Մանջուրիայում յեղած հակայապոնական շարժման հիմնական ուժը: Ծարժմանը մասնակցում են բնակչության համական ուժը, բոլոր դասակարգերը և նրա մեջ ավելի և ավելուր խավերը, բոլոր դասակարգերը և միասնական հակայապոնական ազգային ճակատը:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՌՈՒՅՆ

Զնայելով արդելքներին, յապոնական և չինական միլիտարիստների զաման տեսորին, հազարավոր բանվորներ և գյուղատնտերի դաժան տեսորին, հազարավոր բանվորներ և ինտելիգենցներ անձնազուությամբ զացիներ, ուսուցիչներ և բնակչութեանուններ գույնազուությամբ գուրս են դալիս փողոցները, ցույց անելու:

«... Մեր մի քանի հարյուր ընկերները ծանր վիրավորվել են, — Բեյպինի մի ուսանող նկարագրում ե իր նամակում ելին, — Բեյպինի մի ուսանող նկարագրում հարձակումը հակայապոնակության դավաճանական հարձակումը հակայապոնական ցույցի վրա, վոր տեղի յեր ունեցել 1935 թվի դեկտեմբերին, — չնայելով, վոր մեղանից շատերը պատոված դանգերով բիրատված մատներով ընկած ելին գետնի վրա, վոստիկան կորպատված մատներով չեր զապիում և շրունակում եր գանակությունությունը չեր զապիում և շրունակում եր գանակությունությունը... Սակայն այդ բոլորն այնքան ել կարեոր չե: Մեր վիրավոր վորված ընկերները չելին մտածում իրենց մասին: Պայքարը շրունակվում ե...»:

«... Մեզ ցրում ելին սրերով ու մտրակներով, — կարգում ենք մի ուրիշ նամակում, — վիրավորներն ընկած ելին գետնին և նրանց վոչ վոք ողնություն չեր ցույց տալիս: Վոստիկանները պոկեցին մի ուսանողուհու մազերը, գոռալով— «Վերջապես, պիտի լուս թե չե...» Վիրավորվածները պատկած են բոլոր գործոցներում: Նրանք 200-ից ավելի յեն: Տասը հոգի սպանված են: Ուսանողները գուրս յեկան փողոց, ցույց անելու հանուն հայրենիքի փրկության: Հապա ինչո՞ւ յեն մեզ սպանում»:

Այդպես յեղավ վոչ միայն Բեյպինում, այլև յերկը մյուս ժամանում, այդպես եր ամենուրեք:

Բանակում հակայապոնական մարտիկները հաճախ ցուցաբերում ելին բացառիկ հաստատակամություն և արիություն: 1935 թվի և 1936 թվի սկզբի մասսայական ձերբակալություններից հետո ուսանողներից պահանջեցին, վոր նրանք գրավոր

գեկլարացիայով դատավիճակն կոմունիստներին, վորպես հայրենիքի դավաճանների ու մատնիչների: Զնայելով խոշտանգումներին, բոլոր կալանավորները հրաժարվեցին այդպիսի գեկլարացիա ստորագրելուց: Նման հայտարարությունն տալուց հրաժարվելու համար 1936 թվի մարտին վոստիկանությունը մահացու տանջանքների յենթարկեց Բեյլինի միջնակարգ դպրոցի 18 տարեկան աշակերտ Կուռ Զինին: Կուռ Զինի թաղումը դարձավ հակայալունական հզոր մի ցույց: Վոստիկանությունը կրկին դաժանությամբ ցրեց ցուցարարներին:

Պայքարն ավելի և ավելի լայն և ծավալվում: Յերկրում տարածվում են բանվորների, ուսանողների և աշակերտների գործադուլները, նոր ուժով բանկվում և յապոնական ապրանքները բոյկոտի յենթարկելու շարժումը:

Բանվորներն ու գյուղացիները, փաստաբանները, պրոֆեսորներն ու մանկավարժները, ուսանողները, կանայք ու աղջիկներն ամենուրեք ստեղծում են ազգի փրկության իրենց կազմակերպությունները:

Զինաստանի կոմկուսակցության և խորհրդային շրջանների կառավարության մի շարք կոչերը, յելույթները, այլև մի շարք ցույցեր բնակչության լայն խավերին համոզեցին, վոր ներկայումս շինական կոմունիստներն ամեն ինչ յենթարկում են մի նպատակի, — ազգի փրկության: Ինչպես մենք արդեն ասացինք, գա զգալիորեն նովաստեց քաղաքացիական պատերազմի վերջանալուն, — այն պատերազմի, վոր Գոմինդանը և միլիտարիստները մղում եյին կարմիր բանակի դեմ: Քաղաքացիական պատերազմի դադարումն ուժեղացրեց նոր, հզոր ուժերի հոսանքը դեպի հակայալունական շարժման շարքերը, վորի շնորհիլ ավելի յեւ հեշտանում պայքարը տեսողի և հետապնդումների դեմ, — շարժման լեռալ ձեւ նվաճելու համար:

Տեսորն ու հետապնդումները վերջին հաշվով ավելի յեւ ամրապնդում հակայալունական շարժման շարքերը, ամրապնդում ազգային համերաշխության դադարաները:

Իրենց դրաված շրջաններում յապոնացիները ձերակալել են հարյուրավոր գյուղական տանուտերեր, պահանջելով, վոր նրանք ցույց տան, թե վորտեղ են թափնած պարտիզանները: Յապոնացիների գործադրած սպառնալիքները, խոշտանգումնե-

ու մեծ մասամբ վոչ մի արդյունք չեն տվել: Այսպես, 1936 թվի ամառը Նինդան շրջանում ձերակալվել եր 20 տանուտեր: Նրանցից պահանջեցին, վոր ցույց տան շրջանում յեղած պար- Սրանցից կամացն չեղացին, և հակայալունական մարտիկների տե- ափանական ջոկատների և հակայալունական մարտիկների տե- ղերը: Նրանց յենթարկում եյին խոշտանգումների և գանակո- ղերը: Նույնիսկ ալեհեր մի ծերունու, տանուտեր Խունին ծության: Նույնիսկ ալեհեր մի ծերունու, տանուտեր Խունին յապոնացիք խեղղեցին, սակայն 20 կալանավորներից վոչ մեկը վոչինչ չասաց:

Գիտենալով, վոր պարտիզանների հակայալունական ջո- կատները սնվում են զվարավորապես այն մթերքներով, վոր նրանց հաջողվում ե դրավել թշնամուց, կամ այն մթերքներով, վոր նրանց համար կամավոր կերպով նվիրաբերում և բնակչու- թյունը, բնակիչները հաճախ կանգ չեն առնում ամենալուրջ վտանգի առաջ և ողնում են պարտիզաններին, նրանց ուսեւմները և հաղուստ են մատակարարում: Միշանի գյուղացին օւ Տյան-չենը խմանալով, վոր հակայալունական ժողովրդական գրդ բարենի սուր կարիք և զգում, իր բոլոր խնայո- գությունները (մի քանի հարյուր գոլլար) նվիրեց ազատության մարտիկներին ողնելու համար: Բացի դրանից, բանակի համար գնելով բըինձ և ալյուր, նա զարտուղի ճանապարհներով հասց- րեց հակայալունական ջոկատներին: Վերագառնալիս նրան բոնեց յապոնական պարեկը: Ու Տյան-չենին նետեցին բանտ և խոշտանգեցին: Սակայն յապոնացիներին չհաջողվեց մի բառ անդամ կորզել նրանից: Նրանք Ու Տյան-չենին գնդակահարեցին իննը հոգուց բաղկացած իր ընտանիքի հետ միասին և վառեցին նրա խրճիթը:

